12 JUN 2013 10 APR 2011

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻՒ 1-12 ՅՈՒՆՈՒԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ՃԺԲ. ՏԱՐԻ 1998

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Գրիգոր Բրուտեան*

Ա

Յովհաննէս Սարկաւագից մեզ հասած տարաբնոյթ ստեղծագործութիւնների մէջ, ի թիւս բազում այլ տեղեկութիւնների, կան նաեւ շատ կարեւոր տուեալներ պատմական տարբեր իրադարձութիւնների ժամանակի մասին (դրանց թուականները՝ թուագրութեան տարբեր համակարգերով, դրանց միջեւ եղած ժամանակները եւ այլն): Սակայն, ցաւօք սրտի, այդ տեղեկութիւնների անմիջական օգտագործումը յաճախ յղի է թիւրիմացութիւններ ծնելու վտանգով, եւ ամէն մի առանձին ժամանակային տեղեկութեան օգտագործումը պահանջում է նախ եւ առաջ ստուգել դրա հաւաստիութիւնը՝ տարբեր եղանակներով: Բանն այն է, որ ինչպէս մատենագրական այլ հին սկզբնաղբիւրների, այնպէս էլ այս դէպքում, հեղինակային բնօրինակի չգոյութիւնը (մաշուած, ոչնչացած, կամ կորած լինելը) պարարտ հող է ստեղծում սկզբնաղբիւրի լուրջ աղաւաղումների համար: Կարող են լինել առանձին բառերի, տողերի, նոյնիսկ պարբերութիւնների եւ անգամ՝ թերթերի բացթողումներ, դրանց հակառակ՝ նաեւ ներմուծումներ բուն շարադրանքի մէջ լուսանցքներից, նաեւ՝ պարզ վրիպակ-աղաւաղումներ եւ այլն: Այս ամենը մեծապէս դժուարացնում են բնագրերի օգտագործումը եւ ամէն առանձին դէպքում պահանջում յատուկ հետազօտութիւն:

Պատմագրական, գրական, իմաստասիրական եւ այլ՝ նման բնոյթի երկերում նշուած տեսակի աղաւաղումները բացայայտուում-շտկւում են հիմնականում բանասիրական վերլուծութեամբ: Տոմարագիտական երկերում հնարաւոր է բնագրային տեղեկութիւնների հարազատութիւնը՝ բանասիրականից զատ՝ ստուգել նաեւ տոմարագիտական վերլուծութեան միջոցով:

Ինչ վերաբերում է ժամանակային տուեալներին, նկատենք, որ ընդհանրապէս, սրանցից իւրաքանչիւրի առանձին ստուգումից աւելի նպատակայարմար է սրանց համակարգուած ստուգումը: Այ-

© National Library of Armenia

սինքն, ստուգել ոչ թէ տուեալ հեղինակի ամէն մի ժամանակային տեղեկութիւնը առանձին, այլ վերականգնել տուեալ հեղինակի օգտագործած ժամանակագրական համակարգը ամբողջութեամբ, եւ դրա մէջ, բնականաբար, կը ստուգուեն նաեւ բոլոր առանձին տուեալները:

Այս մօտեցումը, հարկաւ, կիրառելի է ոչ բոլոր հեղինակների եւ ոչ բոլոր ստեղծագործութիւնների դէպքում: Ժամանակագրական համակարգի վերականգնումը իմաստ ունի միայն այն դէպքում, երբ տուեալ երկը, կամ տուեալ հեղինակի բոլոր երկերը ստեղծուած են մէկ միասնական մօտեցմամբ: Բնականաբար, այս մօտեցումը կիրառելի չէ այն դէպքերում, երբ երկի հեղինակը, ինքը չլինելով ժամանակագրական-տոմարական հարցերի հմուտ գիտակ, իր երկը շարադրել է իբր տարբեր սկզբնաղբիւրներից վերցուած առանձին տեղեկութիւնների պարզ շարայարութիւն: Ա՛յսպիսի դէպքերում, բնականաբար, խօսք չի կարող լինել ժամանակագրական միասնական համակարգի մասին:

Յովհաննէս Սարկաւագի պարագայում, այս առումով, դրութիւնը բաւական նպաստաւոր է: Սարկաւագ վարդապետը եղել է իր ժամանակի հմտագոյն տոմարագէտը եւ ընդհանրապէս՝ միջնադարի ամենաականաւոր հայ տոմարագէտներից մէկը, եւ լիովին ակնկալելի է, որ նա իր տոմարագիտական եւ պատմական բոլոր երկերում էլ կիրառած լինի ժամանակագրական միեւնոյն համակարգը: Այսինքն, հիմնուելով այս (մեծապէս ճշմարտամօտ) ընդունելութեան վրայ, կարող ենք փորձել վերականգնել Յովհ. Սարկաւագի ժամանակագրական համակարգը: Եւ, այդ դէպքում, այդ հեղինակից մեզ հասած երկերում տեղ գտած բոլոր այն ժամանակային տուեալները, որոնք ներդաշնակ չեն լինի այդ համակարգին, կը դիտուեն իբր անհարազատ (յետսամուտ, կամ աղաւաղեալ):

Սարկաւագ վարդապետի ժամանակագրական համակարգի վերականգնումը կարեւոր է նաեւ նրանով, որ դրանով էապէս կը դիւրանայ նրա տուած ժամանակային տուեալների կիրառումը Հայոց պատմութեան զանազան հարցեր ճշդելիս:

Արդ փորձենք ի մի բերել ու համակարգել Յովհ. Սարկաւագի ժամանակագրական տուեալները: Նախ տանք այն բոլոր կարեւոր իրադարձութիւնները[1], որոնց բացարձակ կամ յարաբերական ժամանակները այս կամ այն կերպ տրուած են Սարկաւագի տարբեր աշխատութիւններում:

Ադամի արտաքսումը Դրախտից[2],
Ենովքի փոխուելը,
Ջրհեղեղը,
Աշտարակաշինութիւնը,
Աբրահամի ծնունդը,
Հրէից ելքը Եգիպտոսից,
Տաճարի շինութիւնը (Սողոմոնի չորրորդ տարին),
Օլիմպիադի թուականի սկիզբը (առաջին օլիմպիադը),
Տաճարի նորոգումը Զօրաբաբէլի կողմից (Դարեհի երկրորդ տարին),
Հերովդէսի թագաւորութեան սկիզբը,
Քրիստոսի ծնունդը,
Քրիստոսի մկրտութիւնը,
Թադէոս առաքեալը,
Փիլիպպոսի հինգերորդ[3] տարին,
Սուրբ Գրիգորի ելն ի վիրապէն,
Նիկիոյ ժողովը,
Կոստանդիանոսի 20-ամեակը,
Անդրէասի 200-եակի սկիզբը,
Կոստանդնուպոլսի ժողովը,
Սուրբ Սահակ Պարթեւ,
Ս. Գրքի թարգմանութիւնը,
Եփեսոսի ժողովը,
Քաղկեդոնի ժողովը,
Մովսէս Եղիվարդեցու կաթողիկոսութեան սկիզբը,
Սուրբ Յիզոտբուզիտի վկայութիւնը,
Դուինի ժողովը,
Հայոց թուականի հիմնումը,
Էսսեան 500-եակի հիմնումը,
Քաղաքի ժողովը,
[Մանազկերտի ժողովը][4],
Երուսաղէմի առումը Պարսից կողմից,
Վրաց բաժանումը Կիւրիոնի օրօք,
Ս. Հռիփսիմէի վկայարանի կառուցումը Կոմիտաս Աղցեցու կողմից,
Կարնոյ ժողովը, Հերակլի եւ Եզրի հաղորդուելը,
Արաբների առաջին ներխուժումը Հայաստան,
Զուարթնոց (Ս. Գրիգոր) տաճարի կառուցումը,
Անանիա Շիրակունու տոմարական բարեփոխումը,
Երկրորդ 500-եակ շրջանի սկիզբը,
Պատառումն Զատկի (Ծռազատիկ):

Այս ցուցակը կարելի է դեռ կրկնապատկել եւ գուցէ եռապատկել, սակայն արդէն իսկ սա բաւական ընդարձակ է, եւ աշխատանքը դիւրացնելու համար սա եւս կը բաժանենք երկու մասի: Նախ կը հետազօտենք ցուցակի վերին մասը (սկզբից մինչեւ Ս. Գրիգոր), եւ դրանից յետոյ միայն՝ ցուցակի շարունակութիւը՝ մինչեւ վերջ:

Աշխատանքի դիւրութեան առումով յարմար է նշուած իրադարձութիւնների ժամանակները նախ որոշել Ադամի արտաքսման թուականով եւ յետոյ միայն անցնել այլ՝ ասենք՝ Օլիմպիադի, կամ Քրիստոսի ծննդեան, եւ կամ էլ ներկայումս կիրառուող Քրկչական թուականներին[5]:

Սկսենք ըստ կարգի: Հիմնական թուական տուեալները Սարկաւագ վարդապետի ժամանակագրութեան[6] մէջ են:

Ենովքի փոխման համար իր ժամանակագրութեան մէջ Սարկաւագը տալիս է. Ադամից «ամք ՌՆՁԷ (1487)» (էջ 131[7]): Իսկ ջրհեղեղի համար տրուած է՝ Ադամից ՍՄԽԲ (2242) տարի. ընդ որում, այս 2242-ը ստոյգ թուական է, քանի որ այդ միեւնոյն թիւն է տրուած Սարկաւագի տարբեր աշխատութիւններում (էջ 131, 217, 295): Տրուած է (էջ 131) նաեւ Ենովքից ջրհեղեղն եղած տարիների թիւը՝ ՉԾԷ (757): Սա չի ներդաշնակում ջրհեղեղի եւ Ենովքի համար (Ադամից) տրուած թուերին: Այսպէս. մի կողմից՝ Ադամից ջրհեղեղ=2242 տարի, միւս կողմից էլ կը ստացուի՝ Ադամից Ենովք՝ 1487+Ենովքից ջրհեղեղ՝ 757=2244 տարի, որ 2 տարով մեծ է առանձին տրուածից: Ջրհեղեղի 2242 թիւը եւ Ենովքի 1487 թիւը տրուած են Յովհաննէսի երկերում մի քանի տեղեր եւ բոլոր տեղերում էլ նոյնն են (էջ 131, 295), ուստի եւ պիտի համարենք հաւաստի: Ըստ այսմ, սխալ է Ենովքից ջրհեղեղ 757-ը, որ պէտք է շտկել՝ դարձնելով 755 (ՉԾԵ)[8]. սա շատ հաւանական շփոթութիւն է. երեւի շփոթուել են Ե եւ Է գրերը:

Յաջորդը աշտարակաշինութիւնն է: Սրա համար տրուած է. «Ի ջրհեղեղէն յաշտարակն՝ ՍԶԿԷ (2767)» (էջ 131): Սա ակնյայտ շփոթութիւն է: Սրա յաջորդ տողում տրուած է ջրհեղեղից Աբրահամ ՋԽԲ (942) տարի, որ կը նշանակի, թէ Աբրահամն եղել է աշտարակաշինութիւնից առաջ (942<2767): Սա անկարելի է: Բացի այդ, Ադամից Քրիստոսի ծնունդը տրուած է 5198 տարի (էջ 131), որով Քրիստոսի ծնունդը կը լինի ջրհեղեղից 5198-(2767+2242)=189 տարի յետոյ միայն: Սա եւս անիմաստ է: Ուրեմն, այս 2767-ի համար հարկ է փնտռել այլ բացատրութիւն: Իսկ աշտարակաշինութեան համար իր տոմարական «Պատճէնի» ժամանակագրական մասում Սարկաւագը տալիս է. «Ի ջրհեղեղէն յաշտարակն՝ ամք

293-2002

© National Library of Armenia

ԾԻԵ (525): Եւ անտի մինչեւ ցծնունդն Աբրահամու՝ ամք ՋԽԲ (942): Եւ անտի՝ յԱբրահամէ ամք՝ ՆԺԷ (417)» (էջ 217): Այստեղ շարադրանքը փոքր-ինչ խրթին է: Սա հասկանալու համար նկատի ունենանք, որ 417+525=942: Ըստ այսմ, այս տուեալները կը նշանակեն, որ ջրհեղեղից աշտարակ 525 տարի է, իսկ աշտարակից Աբրահամ՝ 417 եւ միանգամայն՝ ջրհեղեղից Աբրահամ՝ 942 տարի: Այս 942-ը նոյնաբար համընկնում է Սարկաւագի ժամանակագրութեան մէջ տրուածին. «Ի ջրհեղեղէն ի ծնունդն Աբրահամու՝ ՋԽԲ (942)» (էջ 131): Այս թուերն ընդունելուց յետոյ հասկանալի է դառնում նաեւ վերը նշուած 2767 տարին՝ ջրհեղեղից աշտարակաշինութեան համար: Այս 2767-ը պարզապէս Ադամից աշտարակաշինութիւնն եղած տարիների քանակն է (Ադամից ջրհեղեղ՝ 2242+ջրհեղեղից աշտարակն՝ 525=Ադամից աշտարակն՝ 2767 տարի): Վրիպակն այստեղ ոչ թէ թուի՛ մէջ է, այլ դրա համար տրուած բացատրութեան մէջ. պէտք է լինէր ոչ թէ. «ի ջրհեղեղէն ցաշտարակն...», այլ՝ «յԱդամայ ցաշտարակն՝ ՍՀԿԷ (2767)»[9]:

Աբրահամի ծննդեան թուի մասին վերն արդէն նշուեց. մի քանի տեղ տրուած է Աբրահամի ժամանակը. ջրհեղեղից 942 տարի (էջ 131, 217, 227): Ըստ այս վկայութիւնների, Աբրահամի ծնունդը պիտի դրուի ջրհեղեղից 942 տարի յետոյ, այսինքն, Ադամից (արտաքսումից) 942+2242=3184 տարի:

Մեր ցուցակում յաջորդը Հրէից ելքն է Եգիպտոսից: Ժամանակագրութեան մէջ Աբրահամի ծննդից յետոյ գրուած է. «Անտի յելսն յԵգիպտոսէ՝ ԾԵ (505)» (էջ 131): Նոյնը տրուած է նաեւ տոմարական «Պատճէնում» (էջ 217): Ըստ այսմ, ելքը Եգիպտոսից կը լինի. Ադամից Աբրահամ՝ 3184+Աբրահամից ելք՝ 505=Ադամից ելքը՝ 3689 տարի: Այս 3689-ը, բացի ուղղակի վկայութիւններից, հաստատւում է նաեւ անուղղակի կերպով. այսպէս՝ ժամանակագրութեան մէջ ունենք. «յԱդամայ ի հայ թուականն՝ ՐՁՄԲ (5752): ... ի Մովսէսէ ի հայ թուականն՝ ՍԿԳ (2063)» (էջ 132): Սրանց տարբերութիւնը, որ պիտի տայ Ադամից Մովսէս ժամանակը, կը լինի 5752-2063=3689 տարի, որ լրիւ ներդաշնակ է վերի թուին:

Սրան հակառակ, «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» երկում ունենք. «Եւ լինի յԱդամայ ՎՀԻԵ (3725) մինչեւ յելսն...» (էջ 227): Նոյնը ունենք եւ մի էջ յետոյ. «յԱդամայ մինչեւ ի Մովսէս՝ ՎՀԻԵ (3725) ամ» (էջ 228): Սա 36 տարով աւելի է վերն ստացուած 3689-ից: Ընդ որում, այս 3725-ը սոյն տեղում վրիպակ կամ շփոթութիւն չէ. այս թուից անմիջապէս յետոյ բնագրում ունենք. «ած Ճ (180), լինի ՎՁԵ (3905)» (էջ 227): Իրօք, 3725+180 =3905: Սա հաստատում է սոյն թուի վրիպակ չլինելը: Այսինքն, ստանում ենք, որ Ադամից մինչեւ Հրէից ելքի համար տրուած այս երկու թուերն էլ իրենց տեղերում վրիպակ չեն, տրամաբանօրէն կապուած են իրենց կից շարադրանքի հետ, ներդաշնակ են այդ շարադրանքներում եղած այլ թուերին[10]:

Այս թուերը ինչ-որ կերպ իրար համաձայնեցնելու համար հարկ է ընդունել, որ կամ

Ա. Սոյն տեղում Ադամից Մովսէս ժամանակի մէջ նկատի է առնուած ոչ թէ Ադամի արտաքսումից, այլ, ասենք, Ադամի արարումից, կամ էլ՝

Բ. Գործ ունենք ժամանակագրական տարբեր համակարգերի հետ:

Առաջին կէտում արուած ենթադրութիւնը այնքան էլ հաւանական չէ, քանի

որ նոյն՝ «Մեկն. տումարիս Հայկ.» երկում Ադամից մինչեւ ջրհեղեղ եւ ջրհեղեղից մինչեւ Աբրահամ տրուած տարիները լրիւ նոյնական են Յովհաննէսի ժամանակագրութեան մէջ եւ այլ երկերում տրուածներին (իսկ այդ տեղերում նկատի է առնուած հէնց արտաքսումը):

Գալով երկրորդ կէտում ասուածին, սա այնքան էլ անհաւանական չէ: Միեւնոյն ժամանակ, սա հնարաւոր է մի քանի ձեւերով: Կարող է յիշեալ երկում խնդրոյ առարկայ հատուածը ամբողջութեամբ յետսամուտ է, կարող է նաեւ՝ այդ երկն ամբողջութեամբ այլ հեղինակի գործ է եւ Սարկաւագին է վերագրուել թիւրիմացաբար: Հնարաւոր են այլ տարբերակներ եւս:

«Մեկնութիւն Տում. Հայկազն.» երկում տրուած օրացուցային այլեւայլ տուեալների վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ այս 3725-ը Ադամից Մովսէս եղած տարիների թիւն է ըստ, այսպէս կոչուած՝ հինգհարիւրեակի համակարգի: Այսպէս, օրինակ, նշուած երկում (էջ 227) ունենք. «...լինի ՆԹ (409), որ է թուական հայոց յելսն»: Այս 409-ը Հայոց Մեծ թուականն է, միայն՝ 532-ամեակներով պարբերացուած դէպի ետ: Այսինքն, ելքից մինչեւ Հայոց թուականի սկիզբը կը լինի n×532+(532-409) տարի, որտեղ n-ը ամբողջ թիւ է: n=4-ի դէպքում կը լինի 4×532+(532–409)=2251: Եթէ սրան գումարենք Ադամից Մովսէս 3725 տարին, կը լինի Ադամից մինչեւ Հայոց թուականը՝ 2251+3725=5976 տարի:

Միեւնոյն ժամանակ, նոյն երկում ունենք. «Զի ըստ Անդրէասայ ժամանակագրութեանն լինի յԱդամայ մինչեւ հայ թուականն ՅՃՄԵ (6155),... եւ ըստ Ծ.եկին թուականին՝ ՐՋՀԶ (5976)» (էջ 224): Այսինքն, ըստ հինգհարիւրեակի համակարգի, Ադամից Հայոց թուականի սկիզբը 5976 տարի է, եւ սա էլ նոյնն է, ինչ որ վերն ստացուած թուականը: Կան այլ օրինակներ եւս, որ հաստատում են, որ վերի 3725 տարին տրուած է ըստ Շ.եակի համակարգի: Իսկ դա էլ նշանակում է, որ սոյն աշխատութեան՝ մէջբերուած հատուածներում կան աղաւաղումներ. իրար հետ խառը ներկայացուած են ժամանակագրական տարբեր համակարգերով տրուած թուական տուեալներ: Ըստ այսմ, սոյն 3725-ը այստեղ չենք քննարկի: Ուրեմն, Հրէից ելքը կը լինի, ըստ Սարկաւագի ժամանակագրութեան համակարգի[11], Ադամից 3689 տարի յետոյ:

Յաջորդ ժամանակային տուեալը Երուսաղէմի տաճարի շինութեան տարին է: Սա եղել է Սողոմոնի չորրորդ տարում եւ Սարկաւագի ժամանակագրութեան մէջ դրուած է Եգիպտոսից ելքից 480 տարի յետոյ. «Անտի (յելիցն եւ Գ. Բ.) մինչեւ ցՍողոմոնի չորրորդ ամն եւ ցտաճարին շինութիւնն ամք ՆՁ (480)» (էջ 131): Ուրեմն, տաճարի շինութիւնը կը լինի Ադամից 3689 + 480 =4169 տարի յետոյ:

Մեր ցուցակում յաջորդը Օլիմպիադի թուականի սկիզբն է (առաջին օլիմպիադը): Սրա մասին ունենք «Մեկնութիւն Տումարիս Հայկազնեայ» երկում. «Լինի բուն թուական մինչեւ յառաջին ղիմպիադն ամք ՏՈԽ (4640), որ ուղիղ բերէ զկարգ հինգհարիւրեկիդ: Եւ ըստ Եւսեբեա[յ]՝ ՏՆԻԴ (4424), յԱդամայ մինչեւ ի Մովսէս ՎՀԻԵ (3725) ամ, եւ հինգհարիւրեակքդ եւթն յելիցն, եւ ի Մովսիսէ մինչեւ ի սկիզբն ղիմպիադացն՝ ՋԺԵ (915): Եւ ըստ Եւսեբեայ՝ ՀԼԵ (735)» (էջ 228): Այստեղ Օլիմպիադի սկիզբը տրուած է հինգհարիւրեակի (Շ.եակի) թուականով ու նաեւ՝ ըստ Եւսեբիոսի: Բուն թուական կոչուածը նոյն Շ.եակի թուականն է, միայն թէ այս դէպքում դրանից հանուած չեն

© National Library of Armenia

532-ամեայ պարբերութիւնները: Ասուածը հաստատւում է այլ փաստերից զատ նաեւ նրանով, որ այս հատուածում տրուած թուականները ներդաշնակում են Հրէից ելքի (Մովսէսի) համար Շ.եակի համակարգով տրուած 3725 թուականին (հաշուած Ադամի արտաքսումից): Իրօք, Ադամից Մովսէս ըստ Շ.եակի 3725 տարի է, եւ Մովսէսից էլ մինչեւ առաջին օլիմպիադը՝ 915: Սրանց գումարը կը լինի Ադամից մինչ Օլիմպիադի սկիզբը 3725+915=4640 տարի: Սա նոյնն է, ինչ որ տրուած է վերեւը՝ մէջբերուած հատուածի սկզբում: Այս հատուածում թուականները տրուած են նաեւ ըստ Եւսեբիոս Կեսարացու համակարգի, որ, փաստօրէն, նոյն համակարգն է, ինչ եւ Սարկաւագի ժամանակագրութեան մէջ կիրառուածը[12]: Իրօք, ըստ Եւսեբիոսի, Օլիմպիադի սկիզբը Ադամից 4424 տարի յետոյ է, իսկ Մովսէսից (ելքից) առաջին օլիմպիադ էլ՝ 735 տարի է (տե՛ս մէջբերուած հատուածը): Կը նշանակի, ըստ Եւսեբիոսի պիտի լինի Ադամից Մովսէս 4424–735=3689 տարի: Եւ սա էլ հէնց այն թիւն է, որ ստացւում է ըստ Սարկաւագի ժամանակագրութեան (տե՛ս վերը): Ըստ այսմ, որպէս Սարկաւագի համակարգ, պիտի Օլիմպիադի սկզբի համար վերցնենք ըստ Եւսեբիոսի տրուած 4424 թիւը:

Այստեղ նկատենք մի նրբութիւն. Շ.եակի եւ Եւսեբիոսի ժամանակագրական համակարգերը իրարից տարբերւում են ոչ միայն իրենց հաշուարկի սկզբնակէտով, այլ նաեւ տարբեր իրադարձութիւնների միջեւ եղած ժամանակներով: Ըստ այսմ, չի կարելի այս համակարգերից մէկով տրուած տարին միւս համակարգին վերածել միշտ միեւնոյն հաստատուն թիւը գումարել կամ հանելով[13]:

Օլիմպիադի թուականի սկզբից յետոյ մեր ցուցակում յաջորդը տաճարի նորոգումն է Դարեհի երկրորդ տարում: Սրա համար ժամանակագրութեան մէջ տրուած է. «Անտի (ի շինութենէն տաճարին - Գ. Բ.) մինչեւ ցնորոգումն տաճարին ի Զաւրաբաբելէ եւ ի Դարեհի Բ ամն՝ ՇԺԲ (512): Անտի մինչեւ ի ծնունդն Քրիստոսի՝ ՇԺԸ (518)» (էջ 131): Նոյնի համար տոմարական պատճէնի ժամանակագրական հատուածում էլ տրուած է. «ամք ՇԺԱ (511): Եւ անտի մինչեւ ի ծնունդն Քրիստոսի՝ ամք ՇԺԸ (518)» (էջ 217):

Այս երկու տեղերում էլ տաճարի շինութիւնից նորոգում տարիները տրուած են տարբեր. մի տեղում 511, միւսում՝ 512 տարի: Ի դէպ. 512 (ՇԺԲ) է տրուած եւ Ոսկեանի հրատարակած համառօտ տարբերակում: Պարզ է, որ այս թուերից մէկը սխալ է: Միեւնոյն ժամանակ, նշուած բոլոր տեղերում էլ տրուած է տաճարի նորոգումից Քրիստոսի ծնունդը՝ 518 տարի: Սրա հետ մէկտեղ ունենք նաեւ. Ադամից Քրիստոս «միանգամայն՝ ՐՇՂԸ (5198)» տարի (էջ 131, 217): Եթէ սրանից հանենք նորոգումից Քրիստոս եղած 518-ը, կը ստանանք Ադամից նորոգումը՝ 5198–518=4680 տարի: Եւ սրանից էլ հանելով տաճարի շինութեան տարին Ադամից (4169), կը ստանանք տաճարի շինութիւնից մինչ նորոգումը 4680–4169=511 տարի: Ուրեմն, վերը քննուած թուերից սխալ է 512-ը, եւ հարկ է այն ուղղել՝ 511 (ՇԺԱ): Ըստ այսմ, Ադամից մինչ տաճարի նորոգումը կը լինի 4680 տարի:

Հերովդէսի թագաւորութեան սկզբի համար ունենք. «Հերովդէս այլազգի՝ ամս ԼԵ (35): Ի սորա ԼԲ (32) ամին ծնաւի Քրիստոս» (էջ 132): Հերովդէսի ժամանակը

տրուած է նաեւ օլիմպիադներով. «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» երկում ունենք. «Հերովդէս թագաւորէ ամս ԼԸ (38): Ի սորա առաջին ամին կատարին եւթներորդքն Դանիէլի, զի ի ԿԶ (66) դիմպիադին ասացաւ նմա թէ՝ եւթներորդք՝ եւթն եւ եւթներորդք՝ ԿԲ (62), որ լինի ԿԹ (69)»[14]: Մի քանի տող վարն էլ՝ «Արդ՝ ԿԶ (66) դիմպիադքն համառաւտեցան եւթներորդքն: Եւ ի ՃՁԶ (186) դիմպիադին թագաւորէ Հերովդէս այլազգի, որ լինի դիմպիադք ՃԻ (120) եւ ամք ՆՁԳ (483): Այս է թիւ եւթներորդացն Դանիելի: Եւ յԼԲ (32) ամին Հերովդի ծնաւ Քրիստոս»[15] (էջ 228): Հերովդէսի թագաւորութեան սկիզբը դրուած է 186-րդ օլիմպիադին, բայց նշուած չէ, թէ օլիմպիադի որ տարին է: Ստացւում է 4 տարուայ անորոշութիւն: Բարեբախտաբար, տրուած է նաեւ, որ 66-րդ օլիմպիադից մինչեւ Հերովդէսի թագաւորելը 186-րդ օլիմպիադում 483 տարի է: 66-ից 186 օլիմպիադը 120 օլիմպիադ է, որ կարող է լինել 480-ից 483 տարի: Այս միջոցը 483 տարի կը լինի միմիայն, եթէ ժամանակը հաշուի 66-րդ օլիմպիադի առաջին տարուց 186-րդի 4-րդ տարին: Սրանով միարժէքօրէն որոշւում է, որ Դանիէլի եօթներորդքը դրուած է 66-րդ օլիմպիադի առաջին տարում (Ol. 66.1)[16], եւ Հերովդէսի թագաւորելը՝ 186-րդ օլիմպիադի 4-րդ տարում (Ol. 186.4): Ըստ այսմ, Քրիստոսի ծնունդն էլ՝ Հերովդէսի 32-րդ տարում կը լինի Ol.186.1+31=Ol. 194.3 (194-րդ օլիմպիադի 3-րդ տարին), որ է Օլիմպիադի սկզբից 193×4+2=774 տարի յետոյ:

Այստեղ կայ ժամանակային մի փոքր անհամաձայնութիւն. ըստ Շ.եակի, Քրիստոսի ծնունդը 5420-ին է, եւ Օլիմպիադի սկիզբն էլ՝ 4640-ին (տե՛ս վերը), որ կը տայ Օլիմպիադի սկզբից Քրիստոսի ծնունդը՝ 5420–4640=780 տարի: Միւս կողմից էլ՝ հաշուելով Հերովդէսի տարիներով, ստացուեց 774 տարի: Այս վեց տարուայ տարբերութիւնը կարող է առաջացած լինել կամ Հերովդէսի տարիների սխալից (ասենք՝ 38՝ փոխանակ 32-ի), եւ կամ էլ օլիմպիադների թուերի սխալից[17]:

Օլիմպիադների թուերի սխալ լինելը շատ քիչ հաւանական է: 483 տարին որոշակիօրէն ճիշտ է, զի դա բղխում է Դանիէլի մարգարէութիւնում տրուած թուերից (7×69=483): Ուրեմն, ճիշտ է եւ 120 օլիմպիադ տարբերութիւնը: Նշանակում է, ճիշտ պիտի լինեն նաեւ 66-րդ եւ 186-րդ օլիմպիադների թուերը (որպէսզի դրանք սխալ լինէին, պէտք է սխալ լինէին երկուսն էլ միաժամանակ եւ այն էլ այնպէս, որ դրանց տարբերութիւնը մնար 120: Սա շատ քիչ հաւանական է, ուստի եւ պէտք է ընդունել օլիմպիադների թուերը՝ ճիշտ):

Մնում է սխալը փնտրել Հերովդէսի 32-ի մէջ: Այս թիւը նոյնութեամբ կրկնւում է տարբեր հեղինակների կազմած համարեա բոլոր ժամանակագրութիւններում: Այսինքն, սրա սխալ լինելը քիչ հաւանական է, եւ եթէ սա սխալ էլ է, ապա սխալը պիտի առաջացած լինի շատ վաղուց՝ ժամանակագրութեան նախնական տարբերակներից մէկում: Միեւնոյն ժամանակ, երկու ձեւերով հաշուելիս առաջացած տարբերութեան 6 տարի լինելը յուշում է, որ այս թուի նախնական տարբերակը պիտի եղած լինի 38: Իրօք, երկաթագիր Ը (8)-ը բաւական նման է Բ (2)-ին, որով եւ անհաւանական չէ սրանց շփոթումը (դրա համար պէտք էր միայն, որ Ը-ի ստորին գծիկը մի փոքր վեր լինէր, կամ էլ ուղղաձիգ գիծը մի փոքր վար երկարէր հորիզոնական գծիկից):

Այստեղ դժուարութիւն է յարուցում միայն այն, որ ըստ մեր ունեցած տար-

© National Library of Armenia

բեր ժամանակագրութիւնների, Հերովդէսը թագաւորել է ոչ աւելի, քան 38 տարի (կան տեղեր էլ, ուր տրուած է 37, 35): Այս դժուարութիւնն էլ կարելի է յաղթահարել, կամ

ա. ընդունելով, որ ընդհանրապէս սխալ է տրուած Հերովդէսի թագաւորութեան տեւողութիւնը, եւ այն պէտք է լինի 38-ից աւելի, կամ էլ

բ. ընդունելով, որ Հերովդէսի թագաւորութեան սկիզբը պարզապէս կիրառուած է իբր դարագլուխ, եւ ժամանակն էլ այդ տարուանից է հաշուուած՝ անկախ այն բանից, թէ որքան է տեւել Հերովդէսի թագաւորութիւնն ինքը: Կամ էլ՝

գ. կարելի է մտածել, որ Քրիստոսի ծնունդը Հերովդէսի 38-րդ տարուայ սկզբում է եղել, իսկ նրա 38 տարի թագաւորած լինելն էլ նշանակել է, որ նա մահացել է 39-րդ տարում (39-րդ տարին չլրացած):

Այս ենթադրութիւններից երկրորդը անընդունելի է սկզբից եւեթ, քանի որ յայտնի է, որ Քրիստոսի ծնունդից քիչ անց Հերովդէսը կոտորել տուաւ Բեթղեհէմի մանուկներին (Մատթ., Բ. 16): Առաջին տարբերակը քիչ հաւանական է. 38 (ԼԸ)-ից աւելի լինելու համար պէտք է թիւը լինէր կամ 39 (ԼԹ), կամ էլ 40 (Խ) եւ աւելի: 30 (Լ)-ը աղաւաղուելով 40 (Խ) դառնալը համարեայ անկարելի է: Ուստի, մնում է 39-ը Սա էլ համարեա նոյնանում է երրորդ տարբերակի հետ: Այսինքն, պիտի ընդունենք, որ ամենայն հաւանականութեամբ, ըստ այս ժամանակագրութեան, Հերովդէսը մահացել է իր թագաւորութեան 39-րդ տարում:

Ընդունելով այս շտկումները, կը ստանանք, որ Հերովդէսի թագաւորութեան սկիզբը պիտի լինի ըստ ժամանակագրութեան համակարգի Ադամից 5198–37=5161 տարի յետոյ եւ ըստ Շ.եակի էլ՝ Ադամից 5420–37=5383 տարի յետոյ:

Օլիմպիադի սկզբից էլ կը լինի ըստ Շ.եակի՝ Ադամից Հերովդէս՝ 5383–Ադամից Օլիմպիադ՝ 4640=Օլիմպիադի սկզբից Հերովդէս՝ 743 տարի: Սա էլ կը տայ 185 օլիմպիադ եւ եւս 3 տարի, որ կ՚անի (Ol. 186.4): Սա նոյնաբար համընկնում է Հերովդէսի համար օլիմպիադներով տրուած ժամանակին:

Ինչպէս երեւում է վերի թուերից, Օլիմպիադի համակարգով տրուած տարիները չեն համընկնում ժամանակագրական համակարգով տրուած տարիներին եւ, միեւնոյն ժամանակ, նոյնաբար համընկնում են ըստ Շ.եակի տրուած տարիներին: Սա նշանակում է, որ Օլիմպիադի համակարգը մեր քննարկած աղբիւրներում ներդաշնակեցուած է միայն Շ.եակի համակարգին, իսկ ժամանակագրութեան համակարգը անկախ է դրանից:

Իրօք, ըստ ժամանակագրութեան, Ադամից Հերովդէս՝ 5161–Ադամից Օլիմպիադ՝ 4424=Օլիմպիադից Հերովդէս 737 տարի: Սա անում է 184 օլիմպիադ եւ եւս 1 տարի, որ կը տայ 185-րդ օլիմպիադի 2-րդ տարին (Ol. 185.2): Սա էլ ակնյայտօրէն տարբեր է Հերովդէսի համար տրուած 186-րդ օլիմպիադից:

Որպէսզի ըստ ժամանակագրութեան եւս Հերովդէսի տարիները ներդաշնակեն Օլիմպիադի տարիներին, հարկ է ըստ ժամանակագրութեան հաշուելու դէպքում Քրիստոսի ծնունդը դնել Հերովդէսի ոչ թէ 38-րդ, այլ 32-րդ տարում: Այս դէպքում կը լինի Ադամից Քրիստոս՝ 5198–31=Ադամից Հերովդէս՝ 5167 տարի: Եւ, եթէ սրանից էլ հանենք Ադամից Օլիմպիադ 4424 տարին, կը լինի 5167–4424=743 տարի՝ Օլիմպիադի սկզբից մինչ Հերովդէս, որ կը լինի 185 օլիմ-

պիադ եւ եւս 3 տարի, այսինքն, (Ol. 186.4), այն, ինչ ստացել էինք վերը:

Այսպիսով, ի մի բերելով Հերովդէսի տարիների քննութիւնը, ստանում ենք, որ Սարկաւագի մօտ ըստ ժամանակագրական համակարգի Հերովդէսի թագաւորութեան սկիզբը Ադամից 5167 տարի յետոյ է, եւ Քրիստոսի ծնունդն էլ դրուած է Հերովդէսի 32-րդ տարում: Իսկ ըստ Շ.եակի համակարգի, Հերովդէսի թագաւորութեան սկիզբը Ադամից 5383 տարի յետոյ է, ու Քրիստոսի ծնունդն էլ՝ Հերովդէսի 38-րդ տարում[18]:

Յաջորդը մեր ցուցակում Քրիստոսի ծնունդն է: Սրա ժամանակի համար բազում տեղերում տրուած է Ադամից 5198 տարի ըստ ժամանակագրութեան, եւ 5420 տարի ըստ Շ.եակի: Այս պարագայում միակ տարաձայնութիւնը որոշ տեղերում երբեմն պատահող 5138 (ՐՃԼԸ)-ն է 5198 (ՐՃՂԸ)-ի փոխարէն: Դա էլ, ինչպէս այլ առիթով նշուել է[19], Լ (30) եւ Ղ(90) գրերի նմանութեան-շփոթութեան հետեւանք է, որի շտկելը սկզբունքային դժուարութիւն չի ներկայացնում: Ըստ այսմ, հարկ է բոլոր տեղերում, ուր հանդիպում է Ադամից Քրիստոսի ծննդեան համար ՐՃԼԸ (5138), այդ թիւը շտկել ՐՃՂԸ (5198)[20]:

Քրիստոսի ծնունդի համար տրուած է նաեւ Օլիմպիադի տարին. «Ի ՃՂԵ (195) ղիմպիադի ծնաւ Քրիստոս» (էջ 228): Այսինքն՝ Օլիմպիադի սկզբից (Ol. 1.1-ից) 194 օլիմպիադ յետոյ, որ է 194×4=776 տարի: Սա էլ կը տայ ըստ ժամանակագրութեան՝ Ադամից Քրիստոս՝ 4424+776 =5200 տարի, իսկ ըստ Շ.եակի՝ 4640+776 =5416 տարի: Այս երկու թուերն էլ չեն համընկնում առանձին տրուածներին: Ըստ ժամանակագրութեան ստացուած 5200-ը 2^{21} տարով աւելի է առանձին տրուած 5198-ից, իսկ ըստ Շ.եակի ստացուած 5416-ը 4^{22} տարով պակաս է առանձին տրուած 5420-ից: Ըստ ժամանակագրութեան Օլիմպիադի սկզբից Քրիստոս 774 տարի է, իսկ ըստ Շ.եակի՝ 780 տարի:

Ինչպէս վերը տեսանք, Հերովդէսի ժամանակը քննելիս, Դանիէլի եօթներորդքը դրուած է Ol. 66.1-ին, իսկ Հերովդէսի թագաւորութեան սկիզբը՝ Ol. 186.4-ին, Դանիէլից 483 տարի անց, որ նոյնացուած է 120 օլիմպիադի հետ: Նոյն տեղում (էջ 228) տրուած է նաեւ. «ԵԼԼԲ (32) ամին Հերովդի ծնաւ Քրիստոս, որ լինի ղիմպիադք ՃԼ (130) եւ բուն թուականն ՐՆԻ (5420)»: Այստեղ 130 օլիմպիադը հաշուուած է դարձեալ Դանիէլից, այսինքն՝ Ol. 66.1-ից: Իսկ 66-րդ օլիմպիադից 130 օլիմպիադ անց կը լինի 66+130=196-րդ օլիմպիադը: Այս 196-ը ներդաշնակ է Քրիստոսը Հերովդէսի 38-րդ տարում ծնուած լինելուն (տե՛ս վերը): Իրօք, Հերովդէսի թագ. սկիզբը Ol. 186.4-ն է. սրանից էլ 38 տարի անց կը լինի Ol. 196.2-ը: Այսինքն, 195-րդ օլիմպիադը չի ներդաշնակում նաեւ Հերովդէսի տարիներով հաշուած թուերին:

Ընդհանրապէս, ինչպէս այլ առիթով ցոյց է տրուել[23], Սարկաւագը Յիսուսի ծնունդը դրել է Ն.Ք. 5 թուի Յունուարի 6-ին: Այդ օրը ընկնում է 193-րդ օլիմպիադի 3-րդ տարուայ մէջ (Ol. 193.3), քանի որ դրանից յետոյ՝ Ն.Ք. 5 թ. Յունիսին սկսւում է օլիմպիադի յաջորդ տարին՝ Ol. 193.4-ը:

Այսինքն, մի կողմից Սարկաւագը Յիսուսի ծնունդը դրել է Ol. 193.3 տարում (Ն.Ք. 5 թ. Յունուարի 6-ին), միւս կողմից էլ տալիս է, որ Քրիստոսը ծնուել է 195-րդ օլիմպիադում, եւ բացի այդ էլ՝ տալիս է, որ դա եղել է Դանիէլի եօթներորդքից (Ol. 66.1-ից) 130 օլիմպիադ յե-

© National Library of Armenia

տոյ, որն էլ իր հերթին տալիս է Ol. 196.1, կամ էլ նոյնիսկ՝ դրանից յետոյ:

Ինչպէս երեւում է, ա՛յս ժամանակաշրջանի համար Օլիմպիադի համակարգով տրուած տարիները լաւ չեն ներդաշնակում ըստ Շ.եակի եւ ըստ ժամանակագրութեան տրուած տարիներին: Կան նոյնիսկ ներքին հակասութիւններ՝ Օլիմպիադի համակարգով տրուած տարիների միջեւ: Ըստ այսմ, Օլիմպիադով տրուած տարիներին հարկ է վերաբերուել որոշ վերապահութեամբ:

Մեր ցուցակում յաջորդը Քրիստոսի մկրտութիւնն է: Սրա ժամանակն ուղղակիօրէն չի տրուած: Ժամանակագրութեան մէջ կայ. «Ի մկրտութենէն մինչեւ ցքսան ամեակն Կոստանդիանոսի՝ ամք Ց (300): Անտի մինչեւ ցհայ թուականն՝ ՄԻԴ (224): Եւ ի քսան ամէն Կոստանդիանոսի մինչեւ ցերկուհարիւրեակին գիւտ յԱնդրէասա[յ]՝ ամք ԻԳ(23): Անտի մինչեւ ցհայ թուականն՝ ամք Մ (200)» (էջ 132)[24]: Այս տուեալներով կարելի է մկրտութեան ժամանակը որոշել անուղղակիօրէն՝ Անդրէասի 200-եակի եւ Հայոց թուականի սկզբի տարիներից դէպի ետ հաշուելով: Սակայն, կան նաեւ այլ՝ ուղղակի տուեալներ՝ Քրիստոսի մկրտութեան ժամանակի վերաբերեալ: «Եկեղեցական պատմութեան» մէջ Սարկաւագը գրում է. «յորում աւուր ծնաւ Քրիստոս, ի նոյն աւուր, յետ Լ (30) ամի, ի Յորդանան մկրտեցաւ» (էջ 139): Այսինքն, մկրտութիւնը ծնունդից 30 տարի յետոյ է եղել: «Մեկն. տումարիս Հայկազնեայ» երկում ունենք. «Արդ, ի մկրտութեան տեառն բուն թուական ՐՆԾ (5450)...» (էջ 234): Սա, իրօք, ծննդեան համար Շ.եակով տրուած 5420-ից 30 տարի աւելի է, որով եւ լրիւ ներդաշնակ է ե՛ւ Շ.եակի 5420-ին, ե՛ւ էլ՝ մկրտութեան 30 տարեկանին: Հիմք ընդունելով այս 30 տարին, ժամանակագրական համակարգում էլ կ՚ունենանք. Ադամից Քրիստոսի ծնունդը՝ 5198+30=Ադամից մկրտութիւնը՝ 5228 տարի: Եւ ըստ Շ.եակի էլ մկրտութիւնը կը լինի Ադամից 5450 տարի յետոյ:

Թադէոս առաքեալի ժամանակը տրուած է Յովհաննէսի ժամանակագրութեան մէջ. «Ի Թադէո[սէ] ի հայ թուականն՝ ՇԺԲ (512): Ի ծննդենէն Քրիստոսի ի հայ թուականն՝ [ՇՄ]Գ (553): Յառաքելոյն Թադէոսէ ի սուրբ Գրիգոր՝ ՄԿԶ (266)» (էջ 132)[25]: Այստեղ Թադէոսի ժամանակը տրուած է Հայոց թուականի սկզբից 512 տարի առաջ: Միւս կողմից էլ տրուած է. «ՅԱդամայ ի հայ թուականն՝ ՐՁՄԲ (5752)» (էջ 132): Այսինքն, եթէ սրանից հանենք Թադէոսից Հայոց թուականն եղած 512-ը, կը ստանանք 5752 – 512 = Ադամից Թադէոս՝ 5240 տարի: Սա կը նշանակի, որ Թադէոսի առաքելութիւնը դրուած է Քրիստոսի ծնունդից 5240–5198=42 տարի յետոյ: Այս 42 տարին չի ներդաշնակում հայ պատմագրական աւանդոյթին, ըստ որի, Քրիստոսը ծնուել է Աբգարի 2-րդ (կամ 1-ին) տարում, եւ Աբգարն էլ թագաւորել է 38 տարի (Խորենացի, գիրք Բ, գլ. ԻԶ, ԼԳ): Այսինքն, Քրիստոսի 42-րդ տարում Աբգարը արդէն մահացած կը լինէր: Դա կը լինէր Աբգարի մահից 4, կամ 5 տարի յետոյ, ուստի եւ Աբգարը չէր կարող ընդունել Թադէոսին ու մկրտուել նրանից: Մինչդեռ, ինչպէս վկայում է Մ. Խորենացին, Աբգարին մկրտել է Թադէոս առաքեալը (Խորենացի, գիրք Բ, գլ. ԼԳ): Դժուար է սպասել, որ Սարկաւագ վարդապետը իր կազմած (կամ խմբագրած-լրացրած) ժամանակագրութեան մէջ դնէր Հայոց պատմութեանն այդքան հակասող թուեր: Ըստ այսմ, այս 512-ը (որով եւ՝ Քրիստոսից Թադէոս 42-ը) հարկ է վերաքննել: Դա կ՚արուի Ս. Գրիգորի ժամանակը քննելիս:

Յաջորդը մեր ցուցակում Փիլիպպոս կայսեր 5-րդ[26] տարին է: Սրա ժամանակը տրուած է Սարկաւագի մի շարք աշխատութիւններում: Փիլիպպոսի 5-րդ (2-րդ) տարին, ըստ հայ տոմարական աւանդոյթի, համընկել է Հռոմի հիմնադրման երկրորդ հազարամեակի սկզբի հետ, եւ այդ տարուանից սկսուել է Հռոմի թուականի հաշուարկը՝ բաց թողնելով առաջին հազարամեակը: «Յաղագս Շ.եկի» երկում կայ. «Եւ ո՛չ իմացան թէ՝ յորժամ լցաւ հազարամ շինութեան քաղաքին Հռոմայ, յառաջնում ամին Փիլիպպեայ, զերկրորդ ամն նորուն կայսեր ո՛չ հինգհարիւրեկի, այլ երկրորդում հազարեկի սկիզբն կարծել պարտ է գոլ: Եւ լինին անտի մինչեւ ի գիւտ հինգհարիւրեկի ամք ՅԺԳ (313): Բայց ոյք ասեն եթէ ՄՄԲ (252) ի ծննդենէն Կենարարին մերոյ մինչեւ ի սկիզբն թուականին հոռոմոց: Եւ թուական եբրայեցոց ի ծննդեանն հարիւր, եւ հանապազորդ թուականին հոռոմոց Մ (180), եւ միաւորեալ զսոսա լինին ՇԼԲ (532), եւ զայն գոլ թուական հոռոմոց լցեալ՝ եւ այլում հինգհարիւրեկի սկիզբն լեալ զերկրորդ ամն Փիլիպպեայ՝ ստեն: Քանզի թէպէտ այնպէս պատահէ ըստ նոցա, այլ ո՛չ յայնմ ժամանակի էր կանոնեալ բոլորակն այն ...» (էջ 237-238):

Յովհաննէսի ժամանակագրութեան մէջ Փիլիպպոս կայսեր տարիները տրուած են բաւական շփոթ կերպով: «Ի քսան ամէն Կոստանդիանոսի մինչեւ ի դիր երկհարիւրեկին ԻԳ (23) ամք են՝ ՁԱ (81)[27] թուականին հոռոմոց: Յերկրորդ ամէն Փիլիպոսի մինչեւ ի քսանամեակն Կոստանդիանոսի, եւ անտի ԻԳ (23) լինի ՃԴ (104)՝ Մ (200) Անդրէասին, միանգամայն ՅԴ (304) մինչեւ ի հայ թուականն» (էջ 132):

Ելնելով տարեթուերի իմաստներից, կարելի է սոյն հատուածը մեկնաբանել հետեւեալ կերպ:

Փիլիպպոսի 5-րդ (2-րդ) տարուց մինչեւ Կոստանդիանոսի 20-ամեակը՝ 81 տարի, անտի մինչեւ Անդրէասի 200-եակի սկիզբը՝ 23 տարի (եւ միանգամայն՝ 23 + 81 = 104 տարի), Անդրէասից էլ մինչ Հայոց թուականը՝ 200 տարի, որ կը լինի միանգամայն՝ 104+200=304 տարի: Այս 304-ը ճիշտ թիւ է, քանի որ ըստ Սարկաւագի, Հռոմի երկրորդ հազարամեակի առաջին տարում (Փիլիպպոսի 2-րդ (իմա՛ 5-րդ) տարում) Լուսնի աւագ լրումն եղել է Ապրիլի 13-ին (էջ 254): Իսկ Ապրիլի 13 լրում եղել է Հայոց առաջին թուին, որ է Փրկչ. 553 թ.: Նոյն լրումը եղած կը լինի նաեւ դրանից 304 տարի առաջ՝ 553–304=249 թուին, քանի որ 304 տարին պարունակում է 16 հատ 19-երեակ[28] (16×19=304): Այս 249 թիւը ճշգրիտ համընկնում է Հռոմի հիմնադրման երկրորդ հազարամեակի առաջին տարուն:

Քանի որ մեր ունեցած թուերից ամենայուսալին Փիլիպպոսից Հայոց թուական 304 տարին[29] է, ապա Փիլիպպոսի տարին կ՚որոշենք Հայոց թուականից ետ հաշուելով: Ունենք. «ՅԱդամայ ի հայ թուականն՝ ՐՁՄԲ (5752)» (էջ 132): Սա եւս յուսալի թիւ է եւ ներդաշնակ է ըստ ժամանակագրութեան տրուած այլ թուերին: Ուստի, սրանից հանելով 304-ը, կը ստանանք 5752–304=Ադամից Փիլիպպոսի 5-րդ տարին՝ 5448 տարի ըստ ժամանակագրութեան: Սա կը նշանակի. որ Քրիստոսի ծնունդից Փիլիպպոս էլ կը լինի 5448–5198=250 տարի: Այս 250-ը 2 տարով պակաս է «Յաղագս Շ.եկի» երկից վերաբերեալ հատուածում տրուած 252-ից: Այս անհամաձայն թուերից տուեալ տեղում ճիշտ պէտք է համարել 250-ը, քանի որ վերոնշեալ երկում Սարկաւագը գրում է. «Բայց ոյք ասեն եթէ ՄՄԲ (252) ի ծննդենէն Կենարարին...»: Այսինքն, այս 252-ը ի՛ր

© National Library of Armenia

տուած թիւը չէ, այլ վերցուած է. այլուստ: Իսկ ընդհանրապէս՝ մեր ճշգրտած միւս թուերի հետ համեմատելով, կարող ենք գտնել, որ սոյն դէպքում ճիշտ են քննարկուող երկու թուերն էլ. 250-ը Քրիստոսից Փիլիպպոս տարիներն են ըստ ժամանակագրութեան, իսկ 252-ը՝ նոյն տարիներն ըստ Շ.եակի:

Ըստ Շ.եակի համակարգի էլ տրուած է. «Զի... լինի յԱդամայ մինչեւ հայ թուականն ... եւ ըստ Շ.եկին թուականին՝ ՐՋՀԶ (5976)» (էջ 224): Նոյն թիւն է եւ Յակոբ Ղրիմեցու՝ Սարկաւագից համառօտած երկում: Այստեղ էլ Հայոց թուականի դրուելու մասին հեղինակն ասում է. «զի յԱդամայ հետէ ՐՋՀԶ ամ էր» (էջ 295)[30]:

Այս 5976-ը նշանակում է, որ ըստ Շ.եակի Քրիստոսի ծննդից մինչ Հայոց թուականը կը լինի 5976–5420=556 տարի: Սա ներդաշնակ է Շ.եակի համակարգով Սարկաւագի տուած թուերին, ըստ որոնց՝ Քրիստոսի ծննդեան Հայոց թուականը 508 է (էջ 233)[31]: Կը նշանակի՝ մինչ պարբերաշրջանի աւարտը կը մնայ 532–508=24 տարի: Ուրեմն, Քրիստոսի ծնունդից Հայոց թուականն էլ կը լինի 24+n×532 տարի: n=1 դէպքում սա կը տայ 24 + 532 = 556 տարի, որ լրիւ նոյնական է վերի թուի հետ:

Այս 5976-ից հանելով 304 տարի, կը ստանանք Ադամից Փիլիպպոս կայսեր 5-րդ տարուայ համար ըստ Շ.եակի՝ 5976–304=5672: Սա էլ կը տայ Քրիստոսի ծնունդից Փիլիպպոս՝ 5672–5420=252 տարի: Այսպիսով՝ ըստ ժամանակագրութեան Ադամից Փիլիպպոսի 5-րդ տարին կը լինի 5448 տարի, իսկ ըստ Շ.եակի էլ՝ 5672 տարի:

Մեր ցուցակում վերջինը Ս. Գրիգորի ելքն է վիրապից: Սրա ժամանակը տրուած է ժամանակագրութեան մէջ. «Ի ծննդէնէն Քրիստոսի մինչեւ ցսուրբ Գրիգոր՝ ամք ՅԴ (304): ... Ի սրբոյն Գրիգորէ մինչեւ ի հայ թուականն ամք ՄԾԲ (252)[32]» (էջ 132): Նոյն ժամանակագրութեան մէջ տրուած է նաեւ. «Յառաքելոյն Թադէոսէ ի սուրբ Գրիգոր՝ ՄԿԶ (266)»: (էջ 132): Հայկական տոմարի մեկնութեան մէջ էլ կայ. «Ի ՄԿԹ (269) [դիմպիադին] սուրբ Հռիփսիմեանքն եկին ի Հայք: Ի ՄՀ (270) դիմպիադին սուրբն Գրիգոր ձեռնադրի հայրապետ Հայոց» (էջ 228): Այստեղ ժամանակը տրուած է առնուազն 4 տարուայ անորոշութեամբ: Նախ, Ս. Գրիգորի ձեռնադրուելը տրուած է հէնց 4 տարուայ անորոշութեամբ՝ Ol. 270.1-ից մինչ Ol. 270.4-ը: Բացի այդ, յստակ չէ՝ Ս. Գրիգորի վիրապից ելքն ու ձեռնադրութիւնը ինչպէս են առնչւում իրար: Ժամանակագրութեան մէջ տրուած է վիրապից ելքը, իսկ այստեղ ասուած է «ձեռնադրութիւն»: Հնարաւոր է, դրանք բերուած են միեւնոյն իմաստով, հնարաւոր է նաեւ, որ դրանք դիտուած են իրենց տառացի իմաստով, եւ այդ դէպքում դրանք իրարից կը տարբերուեն մէկ տարով: Եթէ ընդունենք տառացի, ապա Ս. Գրիգորի ելքը վիրապից մէկ տարի առաջ է նրա հայրապետ ձեռնադրուելուց, որով եւ ըստ վերի թուերի կը լինի Ol. 269.4-ից մինչ Ol. 270.3 միջակայքի տարիներից մէկն ու մէկը: Սա էլ կը տայ Օլիմպիադի սկզբից (այսինքն՝ Ol. 1.1-ից) 268×4+3=1075 տարուց 269×4+2=1078 տարի յետոյ: Եթէ սրան յաւելենք Ադամից Օլիմպիադ տարիները, կ'ունենանք այս միջակայքը Ադամի տարիներով: Ըստ ժամանակագրութեան, Օլիմպիադի սկիզբը Ադամից 4424 տարի յետոյ է, իսկ ըստ Շ.եակի՝ 4640 տարի: Ըստ այսմ կը լինի Ադամից Ս. Գրիգոր ըստ ժամանակագրութեան՝ 5499-ից 5502 տարի[33], եւ ըստ Շ.եակի էլ՝ 5715-ից 5718 տարի[34]:

Արդ, ունենք երեք տարբեր թուեր, որոնց միջոցով կարելի է որոշել Ս. Գրիգորի ժամանակը եւ ունենք քառամեայ (կամ հնգամեայ) մի միջանցք, որից դուրս այդ ժամանակը չպէտք է լինի: Այդ միջանցքը Օլիմպիադով որոշուած տարիներն են, իսկ երեք թուերը հետեւեալն են.

Քրիստոսի ծնունդից մինչ Ս. Գրիգոր՝	304 տարի,
Ս. Գրիգորից Հայոց թուական՝	252 տարի,
Թադէոսից Ս. Գրիգոր՝	266 տարի:

Նախ սկսենք նրանից, որ այս երեք թուերը իրար այնքան էլ լաւ չեն ներդաշնակում: Դրանցից առաջին երկուսը տալիս են մի բան, իսկ երրորդը՝ այլ բան: Այսպէս. Քրիստոսից Ս. Գրիգոր տրուած 304-ին եթէ գումարենք Ս. Գրիգորից Հայոց թուական 252-ը, պիտի ստանանք Քրիստոսից Հայոց թուական տարիները, որ կը տայ՝ 304+252=556: Սա, ինչպէս յետոյ կը տեսնենք[35], այդ միջակայքի համար ըստ Շ.եակի որոշուած ճիշտ ժամանակն է: Կը նշանակի, 304-ն ու 252-ը ըստ Շ.եակի համակարգի տրուած թուեր են եւ ճիշտ են: Գալով Թադէոսից Ս. Գրիգոր 266-ին, սա կը նշանակի, որ եթէ սրան գումարենք Քրիստոսից Թադէոս՝ մեր գտած 42-ը, պիտի ստանանք Քրիստոսից Ս. Գրիգոր՝ 42+266=308 տարի, որ 4 տարով աւելի է ուղղակի տրուածից (տե՛ս վերը): Այսինքն, այս թիւը 4-ով մեծ է պէտք եղածից: Բացի այդ, Թադէոսի ժամանակը, որ հիմնակէտ է ծառայում այս 266-ով հաշուելիս, ինքը ուղղակի տրուած չէ, այլ գտնուած է Սարկաւագի միայն մէկ տեղեկութեան հիման վրայ (Թադէոսից Հայոց թուականը՝ 512 տարի), որով եւ չի բացառւում նաեւ ա՛յդ թուի սխալ լինելը (տե՛ս վերը): Ըստ այսմ, յուսալի թուեր ունենալու համար, հարկ է առայժմ զանց առնել Թադէոսից Ս. Գրիգոր՝ 266-ը, որը՝ նոյնիսկ, եթէ ինքն էլ ճիշտ լինի, դարձեալ կարող է սխալ արդիւնք տալ՝ Թադէոսի ժամանակը սխալ որոշուած լինելու հետեւանքով: Մնում են միւս երկու թուերը՝ 304 տարի՝ Քրիստոսից Ս. Գրիգոր, եւ 252 տարի էլ՝ Ս. Գրիգորից Հայոց թուականը:

Ըստ Շ.եակի հաշուելու պարագայում, սրանք երկուսն էլ տալիս են միեւնոյնը՝ Ադամից 5724 տարի. 5420+304=5724, եւ 5976–252=5724: Այս 5724 տարին անվերապահօրէն ընդունելուն խանգարում է այն, որ սա 6 տարով դուրս է Օլիմպիադներով ըստ Շ.եակի ստացուած միջակայքից (5715-5718):

Ինչպէս վերը տեսանք (Քրիստոսի ծննդեան թուի կապակցութեամբ), ժամանակային այս հատուածում Օլիմպիադի համակարգը ներդաշնակ չէ ոչ Շ.եակի համակարգին, ոչ էլ ժամանակագրութեան համակարգին: Ըստ այսմ էլ, կարող ենք այստեղ զանց առնել Օլիմպիադով տրուած միջակայքը եւ Ս. Գրիգորի ելքը ըստ Շ.եակի դնել Ադամից 5724 տարի յետոյ:

Ըստ ժամանակագրութեան համակարգի ընդունել այս նոյն 304-ն ու 252-ը միաժամանակ՝ չենք կարող: Բանն այն է, որ ա՛յս դէպքում Քրիստոսի ծնունդից Հայոց թուական միջոցը ոչ թէ 556 տարի է (ինչպէս Շ.եակի համակարգով է), այլ 554[36]: Իսկ այս թուերի գումարը այդ նոյն միջակայքի համար տալիս է 556 տարի: Ուրեմն, այս թուերից գոնէ մէկը պէտք է 2 տարով փոքրացուի: Հարկաւ,

© National Library of Armenia

հնարաւոր է նաեւ, որ փոփոխուեն երկուսն էլ, ընդ որում՝ տարբեր ձեւերով:

Նորից դառնանք Թադէոսից Ս. Գրիգոր 266 տարուն եւ սրա հետ միաժամանակ նայենք նաեւ Թադէոսից Հայոց Թուական 512 տարին: Այս թուերը երկուսը միաժամանակ ճիշտ լինել չեն կարող, քանի որ դա կը նշանակի, թէ Ս. Գրիգորից Հայոց Թուական պիտի լինի 512–266=246 տարի, որ 10 տարով փոքր է ըստ Շ.եակի տրուածից: Միւս կողմից էլ՝ քիչ հաւանական է, որ այս թուերը երկուսն էլ միաժամանակ սխալ լինեն: Այսինքն, խելքի մօտ է ընդունել, որ այս թուերից գոնէ մէկը ճիշտ է: Ինչպէս վերը տեսանք, ընդունելով Թադէոսից Հայոց Թուական 512-ը, ստացւում էր, որ Թադէոսի առաքելութիւնը Քրիստոսի ծնունդից 42 տարի յետոյ է, այսինքն՝ համբարձումից 42–33=9 տարի անց: Սա փոքր-ինչ տարօրինակ թիւ է, այն իմաստով, որ ըստ հայ պատմագրութեան աւանդոյթի, Թադէոսը Հայաստան է առաքուել Թովմասի կողմից հէնց Քրիստոսի համբարձուելուց յետոյ (Խորենացի, Բ, ԼԳ): Բացի այդ, ինչպէս վերն արդէն ցոյց տրուեց, ըստ այս 42-ի (այսինքն՝ 512-ի), Թադէոսի Հայաստան գալը լինում է Աբգարի մահից 4, կամ 5 տարի յետոյ, որ անկարելի է ներդաշնակել Հայոց պատմութեան տուեալներին: Ուրեմն, սխալ է 512-ը: Ցաւօք, ուեւէ բանի սխալ լինելը ապացուցելը շատ աւելի դիւրին է, քան այդ սխալի փոխարէն ճիշտը գտնելը: Թադէոսից Հայոց Թուական ճիշտ թիւը գտնելու համար Սարկաւագի երկերում ուեւէ պիտանի մեկնակէտ չունենք: Մնում է, հիմնուել ենթադրութիւնների վրայ: Միակ փոքր ի շատէ խելքի մօտ ենթադրութիւնն այն է, որ այս պարագայում տեղի է ունեցել Ը (8) եւ Բ (2) թուերի շփոթութիւն: Եթէ ընդունենք դա, կը լինի Թադէոսից Հայոց Թուական՝ 518 (ՇԺԸ) տարի, որով եւ Թադէոսի առաքելութիւնն էլ կը լինի Քրիստոսից 554–518=36 տարի յետոյ: Սա, իրօք, Աբգարի ժամանակ է եւ չի հակասում Խորենացու տուեալներին: Հարկաւ, այս 36-ը եւս ունի տարակուսելի կողմեր[37], այդուհանդերձ, աւելի լաւ տարբերակ չունենալու պատճառով, պիտի ընդունենք սա:

Այս դէպքում՝ Քրիստոսից Թադէոս 36+Թադէոսից Ս. Գրիգոր 266=Քրիստոսից Ս. Գրիգոր՝ 302 տարի: Սրանով եւ՝ Քրիստոսից Ս. Գրիգոր 302+Ս. Գրիգորից Հայոց Թուական 252=Քրիստոսից Հայոց Թուական՝ 554 տարի: Սա էլ համընկնում է ըստ ժամանակագրութեան համակարգի եղած 554 տարուն: Ուրեմն, ըստ ժամանակագրութեան կը լինի. Քրիստոսից Ս. Գրիգոր՝ 302 տարի եւ Ս. Գրիգորից Հայոց Թուական՝ 252 տարի: Սա էլ կը տայ ըստ ժամանակագրութեան՝ Ադամից Ս. Գրիգոր՝ 5198+302=5500 տարի եւ ըստ Շ.եակի էլ՝ Ադամից Ս. Գրիգոր՝ 5420+304=5724 տարի:

Իսկ Թադէոսի առաքելութիւնն էլ կը լինի ըստ ժամանակագրութեան՝ Ադամից 5198+36=5234 տարի եւ ըստ Շ.եակի էլ՝ 5420+36=5456 տարի:

Այսպիսով, կարող ենք ամբողջացուած համարել Ադամի արտաքսումից մինչ Ս. Գրիգորի՝ վիրապից ելքը իրադարձութիւնների ժամանակների քննութիւնը:

Արդ, աղիւսակի տեսքով տանք Սարկաւագ վարդապետի տարբեր երկերից մեր քաղած, քննած եւ շտկած ժամանակային տուեալները:

*	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ	ԺԱ	ԺԲ	ԺԳ	ԺԴ	ԺԵ
Ա	*	1487	2242	2767	3184	3689	4169	4424	4680	5167	5198	5228	5234	5448	5500
Բ		*	755	1280	1697	2202	2682	2937	3193	3680	3711	3741	3747	3961	4013
Գ			*	525	942	1447	1927	2182	2438	2925	2956	2986	2992	3206	3258
Դ				*	417	922	1402	1657	1913	2400	2431	2461	2467	2681	2733
Ե					*	505	985	1240	1496	1983	2014	2044	2050	2264	2316
Զ	3725					*	480	735	991	1478	1509	1539	1545	1759	1811
Է							*	255	511	998	1029	1059	1065	1279	1331
Ը	4640					915		*	256	743	774	804	810	1024	1076
Թ									*	487	518	548	554	768	820
Ժ	5383					1658		743		*	31	61	67	281	333
ԺԱ	5420					1695		780		37	*	30	36	250	302
ԺԲ	5450					1725		810		67	30	*	6	220	272
ԺԳ	5456					1731		816		73	36	6	*	208	266
ԺԴ	5672					1947		1032		743	252	222	210	*	52
ԺԵ	5724					1999		1084		314	304	274	268	52	*

Այս աղիւսակում ձախ եզրային սիւնակում եւ վերեւի տողում հայատառ թուանշաններով նշանակուած են հետեւեալ իրադարձութիւնները:

Ա Ադամի արտաքսումը
Բ Ենովքի փոխուելը
Գ Ջրհեղեղը
Դ Աշտարակաշինութիւնը
Ե Աբրահամի ծնունդը
Զ Հրէից ելքը Եգիպտոսից
Է Տաճարի շինութիւնը
Ը Օլիմպիադի սկիզբը
Թ Տաճարի նորոգումը
Ժ Հերովդէսի թագ. սկիզբը
ԺԱ Քրիստոսի ծնունդը
ԺԲ Քրիստոսի մկրտութիւնը
ԺԳ Թադէոս առաքեալ
ԺԴ Փիլիպպոսի 5-րդ տարին
ԺԵ Ս. Գրիգորի ելն ի վիրապէն

Աղիւսակը աստղանիշ անկիւնագծով բաժանուած է երկու կէսի: Անկիւնագծից աջ ու վեր տրուած են տարիներն ըստ ժամանակագրութեան համակարգի, իսկ անկիւնագծից ձախ ու վար տրուած են տարիներն ըստ Շ.եակի համակարգի: Այս կէսում որոշ վանդակներ պարապ են թողնուած: Պատճառն այն է, որ լրացուած են միայն այն վանդակները, ուր տրուած են տարիները այն իրադարձութիւնների միջեւ, որոնց ժամանակները՝ Սարկաւագից մեզ հասած գործերում այս կամ այն կերպ տրուած են Շ.եակի համակարգով: Լրացուած չեն վանդակներն այն իրադարձութիւնների, որոնց ժամանակները ըստ Շ.եակի ուղղակիօրէն, կամ անուղղակի տրուած չեն:

Բ

Նախորդ գլխում ի մի բերեցինք Սարկաւագ վարդապետի ժամանակային տուեալները Ադամի արտաքսումից մինչեւ Ս. Գրիգոր: Արդ, նայենք, թէ ինչ են տալիս նրա ժամանակային տուեալները Ս. Գրիգորին յաջորդող ժամանակների համար:

Նախ նկատենք, որ յարմար է, մեր ցուցակի յաջորդ հատուածը եւս բաժանել մասերի. նախ քննել մինչեւ Հայոց Թուականի հիմնումն ու Շ.եակի սկիզբը եղած հատուածը, եւ ապա միայն անցնել յաջորդ իրադարձութիւններին: Ընդհանրապէս, Հայոց Թուականի հիմնումն ու Շ.եակի սկիզբը հայ տոմարագիտութեան

© National Library of Armenia

մէջ շատ են հոլովուած՝ իբր դարագլուխ իրադարձութիւններ: Բացի այդ, սրանց ժամանակը հնարաւոր է որոշել նաեւ զուտ տոմարագիտական եղանակներով՝ հիմք ընդունելով Լուսնի լրումների եւ այլ տոմարական մակաչափերի մասին մեզ հասած բազմաթիւ տուեալները: Ուստի, այս ժամանակահատուածի իրադարձութիւնները կը քննենք միասնաբար, ընդ որում՝ կը հիմնուենք ոչ թէ իրադարձութիւնների ժամանակային հերթականութեան, այլ դրանց օրացուցային կարեւորութեան, առանցքայնութեան վրայ:

Նախ ճշդենք Հայոց թուականի սկիզբն ու Շ.եակի սկիզբը: Սրանց ժամանակները տրուած են ե՛ւ ըստ Շ.եակի, ե՛ւ էլ ըստ ժամանակագրութեան համակարգերի: Ըստ ժամանակագրութեան ստացւում է Քրիստոսի ծնունդից մինչեւ Հայոց թուականը 554 տարի, իսկ ըստ Շ.եակի էլ՝ 556 տարի:

Ընդհանրապէս, այս իրադարձութեան ժամանակը Սարկաւագի երկերում տրուած է ոչ միարժէք: Այսպէս, ժամանակագրութեան մէջ ունենք. «Անտի (ի ծննդեանէն Քրիստոսի - Գ. Բ.) մինչեւ ի հայ թուականին դիր՝ ՇԾԳ (553): Ինն ամաւ զկնի հինգհարիւրեակն եդաւ՝ ի ծննդեանէն՝ յետ ՇԿԲ (562) ամաց» (էջ 131-132)[38]: Մի քանի տող անց կրկնւում է. «Ի ծննդեանէն Քրիստոսի ի հայ թուականն՝ ՇԾԳ (553)»[39]: Նոյն 553 տարին է տրուած նաեւ տոմարական պատճէնի մէջ (էջ 217): Նոյնն է նաեւ Սարկաւագի աշխատութիւնից Յակոբ Ղրիմեցու համառօտած երկում (էջ 295):

Միեւնոյն ժամանակ, Սարկաւագը տալիս է. «ՅԱդամայ ի հայ թուականն ՐՁՄԲ (5752): Ի ջրհեղեղէն ի հայ թուականն ՎԾԺ (3510): ՅԱբրահամէ ի հայ թվականն՝ ՍԾԿԸ (2568)[40]: Ի Մովսէսէ ի հայ թվականն՝ ՍԿԳ (2063)» (էջ 132): Այս թուականները բոլորն էլ նշանակում են, որ Քրիստոսի ծնունդից մինչ Հայոց թուականի սկիզբը պիտի լինի ոչ թէ 553, այլ 554 տարի: Իրօք, եթէ Ադամից Հայոց թուական 5752-ից հանենք Ադամից Քրիստոս 5198-ը, կը ստանանք 5752–5198=554 տարի: Նաեւ՝ ջրհեղեղից Հայոց թուական 3510-ից հանենք ջրհեղեղից Քրիստոս 2956 տարին, կը ստանանք՝ 3510–2956=554 տարի: Նաեւ՝ Աբրահամից Հայոց թուական 2568-ից հանենք Աբրահամից Քրիստոս 2014 տարին, կը ստանանք՝ 2568–2014=554 տարի: Նոյնն է եւ Մովսէսի տարիներով. 2063–1509=554 տարի:

Այսինքն, ստանում ենք, որ ըստ Ադամի, ջրհեղեղի, Աբրահամի, Մովսէսի համար տրուած տարիների, Հայոց թուականը դրուել է Քրիստոսի ծնունդից 554 տարի յետոյ: Նոյնն է տալիս եւ Յովհաննէսի մի այլ վկայութիւնը. «Ի մկրտութենէն մինչեւ ցքսան ամեակն Կոստանդիանոսի՝ ամք Ը (300): Անտի մինչեւ ցհայ թուականն՝ ՄԻԴ (224)» (էջ 132)[41]: Ըստ սրա էլ մկրտութիւնից Հայոց թուական լինում է 300+224=524 տարի: Նկատի ունենալով, որ մկրտութիւնն էլ ծնունդից 30 տարի յետոյ է, կը ստանանք 30+524=554 տարի՝ ծնունդից մինչ Հայոց թուական: Միեւնոյն ժամանակ, սրան զուգահեռ՝ նոյն հեղինակի նոյն երկում տրուած է նաեւ, որ Քրիստոսի ծնունդից մինչ Հայոց թուականի հիմնումը 553 տարի է: Ինչպէ՞ս յաղթահարել այս մէկ տարուայ զանազանութիւնը: Հարկաւ, շատ դայթակղիչ է, այստեղ իբր բացատրութիւն ընդունել, որ սոյն տեղում 554 (ՇԾԴ)-ի 4 (Դ)-ը շփոթուել-դարձել է 3(Գ) եւ տուել 553 (ՇԾԳ): Սակայն, ա՛յս դէպքում այս բացատրութիւնը բաւարար չէ: Բանն այն է, որ վերը մէջբերուած հատուածում տեսանք, որ այս 553-ից յետոյ տրուած է նաեւ Հայոց թուականից 9 տարի անց եղած իրադարձութեան՝ Շ.եակի դրուելու ժամանակը՝ Քրիստոսի ծննդից 562 տարի յետոյ: Եւ իրօք. 553+9=562: Այսինքն, այս 553-ը սոյն տեղում վրիպակ չէ, զի հակառակ դէպքում, դա չպիտի ներդաշնակէր դրան կից տրուած 9 տարուայ եւ 562 տարուայ հետ: Այսինքն, 553-ը այստեղ իր անմիջական հարեւան թուերով ճիշդ է, բայց միեւնոյն ժամանակ, նա (բնականաբար՝ իր հարեւան թուերը եւս) չի ներդաշնակում ժամանակագրութեան ընդհանուր համակարգին: Այս անհամաձայնութիւնը կարելի է բացատրել մի քանի կերպ:

ա. Հնարաւոր է, այս 553-ը եւ իրեն կից մի քանի թուերը Յովհաննէսի ժամանակագրութեան մէջ ներմուծուել են այլուստ՝ մի բոլորովին այլ ժամանակագրական համակարգից:

բ. Հնարաւոր է նաեւ, որ նախապէս եղած լինի 554, ապա այդ 554-ը աղաւաղուած-դարձած լինի 553, եւ ապա ըստ այս 553-ի էլ շտկուած լինեն դրան կից թուերը (562-ը եւ 9-ը):

Այս երկրորդ տարբերակը քիչ հաւանական է: Ուստի, պիտի համարենք, որ Քրիստոսից Հայոց թուական 553 տարի վկայող հատուածը շարադրանքի մէջ ներմուծուած է այլուստ: Դա է վկայում նաեւ այն, որ բոլոր տեղերում սոյն հատուածը գրուած է միակերպ, որ յուշում է այդ բոլոր հատուածների միեւնոյն աղբիւրից արտագրուած լինելը:

Բացի այդ, 554-ը ոչ թէ ուղղակի գրուած է, որ հնարաւոր լինէր ենթադրել դրա աղաւաղումը, կամ յետսամուտ լինելը, այլ բղխում է Սարկաւագի ժամանակագրական համակարգի բազմաթիւ այլ թուականներից, մինչդեռ 553-ը ուղղակի տրուած թուական է, որ ենթակայ է աղաւաղուած, կամ այլուստ ներմուծուած լինելու:

Այսպիսով, ըստ ժամանակագրութեան, Հայոց թուականը դրուել է Քրիստոսի ծնունդից 554 տարի յետոյ:

Ըստ Շ.եակի համակարգի այս նոյն միջոցը 556 տարի է: Իրօք, ինչպէս այլ առիթով արդէն նշուել է[42], «Մեկն. տոմարի Հայկազնեայ» երկում Սարկաւագը տալիս է. «ՅԱդամայ մինչեւ հայ թուականն գ ըստ Շ.եկին թուականին՝ ՐՋՀԶ (5976)» (էջ 224): Այս թուից եթէ հանենք ըստ Շ.եակի Ադամից Քրիստոս եղած 5420 տարին, կը ստանանք. 5976–5420=556 տարի՝ Քրիստոսից Հայոց թուական: Այս նոյն 556-ը ստացւում է նաեւ հետեւեալ կերպ: «Մեկն. տում. Հայկ.» երկում կայ. «Լինի ի ծննդեանն Քրիստոսի հայոց թուականն ՇԸ (508) եւ հոռովմն՝ ՄՁ (280)» (էջ 226): Ինչպէս արդէն նշուել է[43], այս 508-ը Հայոց Մեծ թուականն է, միայն՝ 532-ամեակներով պարբերացուած եւ դէպի ետ կիրառուած: Եթէ Քրիստոսի ծնունդը այս թուականով 508 թուին է, իսկ Հայոց թուականի սկիզբն էլ, բնականաբար, պիտի լինի 1 թուականին, ապա կարող ենք հաշուել հետեւեալ կերպ. 1 թուականը նոյնն է ինչ եւ 532+1=533 թուականը: Ուրեմն, Քրիստոսից Հայոց թուական կը լինի (533–508+n×532) տարի, որտեղ n-ը բնական թիւ է (0, 1, 2, ...): n=0 դէպքում սա կը տայ 533–508+0=25 տարի, որ ընդունելի չէ: n=1 դէպքում կը լինի. 533–508+1×532=557 տարի: Այստեղ ստացւում է 556-ից մէկ տարով աւելի: Այս մէկ յաւելեալ տարին գալիս է նրանից, որ Քրիստոսի ծնունդից (Յունուարի 6-ից) մինչեւ Աթանաս Տարօնացու սահմանած Հայոց Մեծ թուականի սկիզբը (Յուլիսի 11-ը) կէս տարի է, իսկ տարին

© National Library of Armenia

էլ՝ քրիստոնէական տոմարում հաշուուել է գարնանամուտից գարնանամուտ, որով եւ Յունուարի 6-ից դրան յաջորդող Յուլիսի 11-ը անցնելիս, արանքում (Մարտի 20-ին) անցնում ենք «յաջորդ տարուայ» մէջ. այսինքն, մեր տարեհաշուին յաւելւում է մէկ տարի:

Նոյնն է ստացւում նաեւ, եթէ հաշուենք Լուսնի աւագ լրման[44] օրերով: Այսպէս. ունենք. «Արդ՝ ի ծննդեանն (Քրիստոսի - Գ. Բ.) վերադիր ԻԵ (25), եւ թներեակն եւ թն, լրումն ի մարտի ԻԱ (21), աւրն երեքշաբաթ» (էջ 233): Իսկ միեւնոյն ժամանակ, ունենք, որ Հայոց 1 թուականին վերադիրը (հռոմէական) Լ (30) է, իսկ լրումը՝ Ապրիլի ԺԳ (13)-ին[45]: Այստեղ վերը մէջբերուած հատուածում 25 (ԻԵ) վերադիրը հռոմէական վերադիրն է, ընդ որում՝ նոր վերադիրը[46]: Այդ տարուայ հին վերադիրը կը լինի 23 (ԻԳ)[47]: 23 վերադիրն ու Մարտի 21 լրումը համապատասխանում են 19-երեակի 5-րդ տարուն[48], իսկ 30 վերադիրն ու Ապրիլի 13 լրումը համապատասխանում են 19-երեակի 11-րդ տարուն[49]: 19-երեակի 5-րդ տարուց մինչեւ 11-րդ տարին 6 տարի է: Սակայն, քանի որ գործ ունենք պարբերաշրջանի հետ, այդ տարբերութիւնը կարող է լինել ընդհանուր դէպքում (6+n×19) տարի, որ n=29-ի դէպքում կը տայ 6+29×19=557 տարի: Այստեղ եւս ստացւում է 556-ից մէկ տարով աւելի: Վերը արդէն տեսանք, թէ ինչպէս է առաջանում այս մէկ յաւելեալ տարին, այնպէս որ այս մէկամեայ տարբերութիւնը աւելի թուացեալ է, քան իրական եւ 556-ը ընդունելուն չի խանգարում:

Նոյնը կը ստացուի նաեւ, եթէ հաշուենք՝ հիմք ընդունելով Յայտնութեան ամիս-ամսաթուերը: Իրօք, Սարկաւագը յայտնում է, որ Քրիստոսի ծննդեան բուն օրը եղել է Հոռի 10-ին (էջ 232), միեւնոյն ժամանակ, Հայոց առաջին թուականին էլ Յայտնութիւնը եղել է Արաց Լ (30)-ին[50]: Հոռի 10-ից մինչ Արաց 30 միջոցը 140 օր է: Իսկ որպէսզի ամսաթիւը փոխուէր 140 օրով, անհրաժեշտ է, որ անցնէր 140×4=560 տարի: Այստեղ էլ ունենք քառամեայ տարբերութիւն: Սա էլ արդիւնք է դարձեալ նոյն՝ վերը նշուած կէս տարուայ տարբերութեան, որը, յառաջացրել է մէկ տարուայ սխալ, այդ մէկ տարին էլ բազմապատկուելով 4 տարով (նահանջների պարբերութեամբ), տուել է ասա ի յայտ եկած քառամեայ տարբերութիւնը: Այսինքն, Յայտնութեան ամսաթուերը եւս տալիս են՝ Քրիստոսի ծննդից Հայոց թուական՝ 556 տարի:

Այսպիսով, ի մի բերելով ասուածը, ստանում ենք, որ Հայոց թուականի սկիզբը դրուել է Քրիստոսի ծնունդից 554 տարի յետոյ՝ ըստ ժամանակագրութեան (եօթանասնից), եւ 556 տարի յետոյ՝ ըստ Շ.եակի համակարգի:

Գալով Շ.եակի սկզբին, անհրաժեշտ է, որ սա էլ լինի Հայոց թուականի սկզբից 9 տարի յետոյ: Այս 9 տարին բղխում է օրացուցային իրողութիւններից: Այսպէս. Հայոց թուականը հիմնուել է Անդրէասի 200-եակի[51] աւարտից անմիջապէս յետոյ, այնպէս, որ Հայոց թուականի առաջին Զատիկը եղել է Անդրէասի զատկացուցակի վերջին Զատիկի անմիջական յաջորդը (Փ. 553 թուականինը): Իսկ Անդրէասի 200-եակն էլ աւարտուել է 19-երեակի 10-րդ տարով, եւ դեռ 9 տարի կար մինչեւ 19-երեակի լրումը եւ յաջորդ 19-երեակի սկիզբը: Էասեան Շ.եակն էլ սկսուել է նոր 19-երեակի սկզբով՝ առաջին տարով, որով եւ Հայոց թուականի սկզբից մինչ Շ.եակի սկիզբը պիտի լինի հէնց 9 տարի[52]: Այս 9 տարին պիտի նոյնը լինի ե՛ւ ժամանակագրութեան, ե՛ւ էլ Շ.եակի համակարգերով: Այնպէս որ, ըստ այսմ, Շ.եակի սկիզբը կը լինի ըստ ժամանակագրութեան՝ Քրիստոսի ծնունդից 554+9=563 տարի յետոյ, իսկ ըստ Շ.եակի էլ՝ 556+9=565 տարի յետոյ: Այս թուերը, ինչպէս երեւում է, հակասում են վերը մէջբերուած հատուածում Սարկաւագի տուած 562-ին: Սակայն, ինչպէս արդէն նշուեց, հարկ է ընդունել, որ այդ հատուածը Սարկաւագի երկերում ներմուծուած է այլուստ, ուստի եւ անհարազատ է:

Յաջորդ առանցքային իրադարձութիւնը Անդրէասի 200-եակի սկիզբն է: Սրա ժամանակը յայտնի է օրացուցային բազմաթիւ տեղեկութիւնների հիման վրայ[53]: Անդրէասի 200-ամեայ զատկացուցակի առաջին Զատիկը եղել է Փ. 353 թ. (Ապրիլի 11-ին): Թէ ինչ տարեմուտ է ընդունել Անդրէասը, դժուար է միանշանակ ասել, սակայն հիմք ունենալով այն, որ Անդրէասի տոմարի մէջ տարեմուտ (եւ ընդհանրապէս՝ սկիզբ՝ արարչութեան ժամանակ) է համարուած գարնանամուտը, կարելի է համարել, որ այս 200-ամեայ զատկացուցակի տարին եւս հաշուուել է գարնանամուտից:

Յովհաննէսի ժամանակագրութեան մէջ ունենք. «Ի քսան ամէն Կոստանդիանոսի մինչեւ ի դիր երկհարիւրեկին ԻԳ (23) ամք են՝ ՁԱ (81) թուականին հոռոմց: Յերկրորդ ամէն Փիլիպպոսի մինչեւ ի քսանամեակն Կոստանդիանոսի, եւ անտի ԻԳ (23) լինի ՃԴ (104)՝ Մ (200) Անդրէասին, միանգամայն ՅԴ (304) մինչեւ ի հայ թուականն» (էջ 132): Այս հատուածը որոշակիօրէն աղաւաղուած է[54]: Այդուհանդերձ. իմաստը կարելի է հասկանալ բաւական մեծ յուսալիութեամբ: Այսպէս. տրուած է Կոստանդիանոսի 20-ամեակից մինչեւ Անդրէասի 200-եակի սկիզբը՝ 23 տարի: Փիլիպպոսի 5-րդ[55] տարուց մինչ Կոստանդիանոսի 20-ամեակը՝ 81 տարի: Դրանց գումարը տալիս է՝ Փիլիպպոսի 5-րդ տարուց մինչ Անդրէասի 200-եակը՝ 23+81=104 տարի: Դրան էլ յաւելելով Անդրէասի 200 տարիները, կը ստանանք Փիլիպպոսի 5-րդից մինչ Հայոց թուական՝ 104+200=304 տարի: Այսինքն, ըստ այս մէջբերման, Անդրէասի 200-եակի սկիզբը Հայոց թուականից 200 տարի առաջ է եւ Փիլիպպոսի 5-րդից էլ՝ 104 տարի յետոյ: Միաժամանակ, պարզւում է նաեւ Կոստանդիանոսի 20-ամեակի տեղը՝ Փիլիպպոսի 5-րդից 81 տարի յետոյ եւ Անդրէասի 200-եակից էլ 23 տարի առաջ:

Եթէ այս տարիները վերածենք Ադամի արտաքսման թուականի, կը ստանանք՝ ըստ ժամանակագրութեան Ադամից մինչ Փիլիպպոսի 5-րդը՝ 5448+Փիլիպպոսի 5-րդից մինչ Կոստանդիանոսի 20-ամեակը՝ 81=Ադամից մինչ Կոստանդիանոսի 20-ամեակը՝ 5529 տարի: Իսկ ըստ Շ.եակի համակարգի էլ կը լինի. Ադամից Փիլիպպոսի 5-րդը՝ 5672+81=Ադամից Կոստանդիանոսի 20-ամեակը՝ 5753 տարի:

Անդրէասի 200-եակի սկզբի համար էլ կ՝ունենանք ըստ ժամանակագրութեան՝ Ադամից Հայոց թուական՝ 5752–200=Ադամից Անդրէաս՝ 5552 տարի: Ըստ Շ.եակի էլ կը լինի. Ադամից Հայոց թուական՝ 5976–200=Ադամից Անդրէաս՝ 5776 տարի: Այս թուերը ներդաշնակ են նաեւ Կոստանդիանոսի 20-ամեակից Անդրէասի 200-եակի սկիզբը 23 տարի լինելուն: Իրօք, ըստ Շ.եակի՝ 5776–5753=23 տարի: Եւ ըստ ժամանակագրութեան էլ՝ 5552–5529=23 տարի:

Առաջ անցնելով, նախ փորձենք

© National Library of Armenia

պարզել Նիկիոյ, Կ. Պոլսի, Եփեսոսի եւ Քաղկեդոնի ժողովների ժամանակները: Սրանք բոլորը տրուած են միասնաբար՝ Յովհաննէսի ժամանակագրութեան մէջ. «Ի ծննդենէն Քրիստոսի ի Նիկիա ժողովն՝ ամք ՅԻԳ (323)[56]: Անտի ի Կոստ[անդ]ինուպալսի ժողովն՝ ամք ՀԳ (73)57: Անտի յԵփեսոսի առաջին ժողովն՝ ամք Ը (50)[58]: Անտի Քաղկեդոնի ժողովն՝ ամք ԻԷ (27): Անտի ի Դվնա[յ] ժողովն՝ ի Հայք՝ ամք ԼԶ (36): Անտի ի քաղաքի ժողովն՝ ի սուրբ Կաթողիկէ՝ ամք Ղ (90), յորում որոշեցին Յոհան Տիկորեցի: Եւ էր թուականն հայոց ՃՀԳ (173): Եւ յելիցն ի Վիրապէն սրբոյն Գրիգորի՝ ամք ՇԼԳ (533)[59]: Եւ ի թարգմանութենէ հայոց գրոյս՝ ամք Յ (300)»[60] (էջ 132):

Այստեղ ունենք իրար ագուցուած թուերի մի շարք, եւ հարկ է դրանք ճշդել բոլորը միասին: Սկսենք վերջին տուեալներից: Քաղաքի (իմա՝ Վաղարշապատի) ժողովի ժամանակի համար տրուած է.

ա. Հայոց թուականը՝ ՃՀԳ (173),

բ. Ս. Գրիգորից ՇԼԳ (533) տարի յետոյ, ու նաեւ՝

գ. Ս. Գրքի հայերէն թարգմանութիւնից Յ (300) տարի անց[61]:

Սրանց հետ մէկտեղ, ինչպէս վերը պարզեցինք, Քրիստոսի ծննդից Հայոց թուական 554 տարի է (ըստ ժամանակագրութեան համակարգի), ուրեմն, Հայոց 173 թուականը կը լինի Քրիստոսից 554+172=726 տարի: Պարզել ենք նաեւ, որ Քրիստոսից Ս. Գրիգոր 302 տարի է: Ուրեմն, Քրիստոսից քաղաքի ժողովը կը լինի 302+533=835 տարի: Սա շատ է տարբեր վերի 726-ից, եւ աւելի խելքի մօտ է ճիշդ համարել Հ. Ոսկեանի օրինակում այս 533-ի փոխարէն տրուած 433-ը: Ըստ այսմ, կը լինի 302+433=735 տարի:

Միւս կողմից էլ՝ վերը մէջբերուած հատուածում ժողովների տարիներն իրար գումարելով, կը ստանանք. Քրիստոսից Նիկիա՝ 323+Նիկիայից Կ. Պոլիս՝ 73+անտի մինչ Եփեսոսի ժողովն՝ 50+Եփեսոսից Քաղկեդոն՝ 27+անտի Դուինի ժողովն՝ 36+անտի մինչ քաղաքի ժողովն՝ 90=599 տարի՝ Քրիստոսի ծննդից մինչ Վաղարշապատի ժողովը: Այսպիսով, միեւնոյն միջակայքի համար ստանում ենք.

ա. 599 տարի՝ ըստ ժողովների տարիների գումարի,

բ. 726 տարի՝ ըստ Հայոց թուականի,

գ. 735 տարի՝ ըստ Ս. Գրիգորի տարիների (կամ՝ 835՝ եթէ չուղղենք ըստ Հ. Ոսկեանի օրինակի):

Այս թուերից 599-ը, թերեւս, կարելի է մի փոքր շտկել: Բանն այն է, որ Սարկաւագի աշակերտ Սամուէլ Անեցու պատմութեան մէջ Եփեսոսի առաջին ժողովից 24 տարի անց նշուած է նաեւ Եփեսոսի երկրորդ ժողովը[62]: Արդ, եթէ ընդունենք, որ Յովհաննէսի բնագրում էլ նախապէս եղել է այս 24 տարին՝ Եփեսոսի երկրորդ ժողովով, որ յետոյ բաց է թողնուել Եփեսոսի առաջին եւ երկրորդ ժողովները իրար հետ շփոթելու հետեւանքով, կարող ենք այս 599-ին յաւելել եւս 24 տարի, որով եւ նոյն ժամանակի համար կ'ունենանք 599+24=623 տարի: Այդուհանդերձ, այս 623-ը եւս էապէս փոքր է միւս երկու թուերից:

Մեր ստացած երեք թուերից՝ 599 (623), 726 եւ 735-ից առաջինը ստացուած է 6 (կամ 7) տարբեր թուերի գումարից, իսկ վերջին երկուսը՝ մէկական թուերի եւ համապատասխան դարագլուխ տարիների գումարից: Այսինքն, եթէ այս երեք թուերի անհամաձայնութեան պատճառը փնտռենք գրչական աղաւաղում-վրիպակների մէջ, ապա առաջին թուի սխալը գտնել չենք կարող (սխալը կարող էր կապուած լինել դրա 6, կամ 7 գումարելիներից ոեւէ մէկի, կամ միաժամանակ՝ մի քանիսի հետ): Ուրեմն, հարկ է սխալը փնտռել 726-ի եւ 735-ի մէջ: Այս երկու թուերը գոյացել են Սարկաւագի տուած ՃՀԳ (173) եւ ՆԼԳ (433) թուերից: Այս երկու թուերի վերջին նիշը Գ (3) է, որ ենթակայ է դիւրաւ Դ (4) դառնալու: Հ (70)-ը դիւրաւ շփոթելի չէ, իսկ Լ (30)-ը կարող էր շփոթուել Ղ (90)-ի եւ Ի (20)-ի հետ: Լ (30)-ի փոխարէն Ղ (90) ենթադրելը ոչինչ չի տալիս: Իսկ, եթէ ընդունենք, որ նախապէս Լ (30)-ի տեղում եղել է Ի (20), ապա ՆԼԳ (433)-ի փոխարէն կը ստանանք ՆԻԳ (423): Եթէ սրան էլ աւելացնենք միւս հաւանական սխալը՝ Գ (3)-ի փոխարէն Դ (4), ապա կը ստանանք, որ շատ հաւանական է՝ նախապէս ՆԼԳ (433)-ի փոխարէն եղել է ՆԻԴ (424)[63]: Եթէ ընդունենք այս ենթադրութիւնը, ապա կը ստանանք, որ ըստ Ս. Գրիգորի տարիների, պիտի լինի Քրիստոսի ծնունդից քաղաքի ժողովը եւս՝ 726 տարի (302+424=726): Ուրեմն, եթէ վերն առաջարկուած ուղղումները ընդունենք, կը ստացուի, որ ե՛ւ ըստ Հայոց թուականի, ե՛ւ էլ ըստ Ս. Գրիգորի տարիների կ'ունենանք Քրիստոսի ծնունդից մինչ խնդրոյ առարկայ ժողովը՝ 726 տարի: Եւ, ըստ այսմ, սխալ պիտի համարուեն վերի մէջբերեալ հատուածում տրուած՝ ժողովների տարիները, որոնց գումարով ստացուել էր 599 (կամ 623) տարի:

Այս 726-ի հետ ներդաշնակ է եւ Ս. Գրքի թարգմանութիւնից 300 տարի անց եղած լինելը: Իրօք, ինչպէս յայտնի է, Ս. Գրքի հայ. թարգմանութիւնը Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթեւի եւ նրանց աշակերտների ձեռքով կատարուել է Փրկչ. 405-430 թթ. միջակայքում. ամէն դէպքում՝ նախքան 431 թ. Եփեսոսի տիեզերական ժողովը[64]: 726-ից 300 տարի առաջ կը լինի 726–300=426 տարի Քրիստոսի ծնունդից յետոյ[65]:

Ստացւում է, որ այս ժողովի ժամանակը՝ Քրիստոսից 726 տարին ներդաշնակ է ե՛ւ Հայոց 173 թուականին, ե՛ւ Ս. Գրքի թարգմանութիւնից 300 տարի անց եղած լինելուն, ե՛ւ էլ Ս. Գրիգորից 424 տարի յետոյին[66]: Այսինքն, այս թիւը կարող ենք համարել բաւական յուսալի: Միւս կողմից էլ, ինչպէս արդէն նշուեց, այս 726-ը բնաւ չի ներդաշնակում ժողովների միջեւ եղած տարիների գումարին, որ տալիս է Քրիստոսից՝ 599 տարի: Միեւնոյն ժամանակ՝ այլ աղբիւրների հետ համեմատութիւնը ցոյց է տալիս, որ շփոթութիւն կայ նաեւ այս ժողովների նոյնացման խնդրում:

Այսպէս. Սամուէլ Անեցին տալիս է Քրիստոսի ՉԻԷ (727) թուականին «Ժողովն Մանազկերտոյ ի Տէր Յովհաննէս Օձնեցւոյն՝ վասն Քաղկեդոնի աղանդոյն»[67]: Սարկաւագից աւելի քան 100 տարի առաջ գրուած Թղթեայ ձեռագրում էլ տրուած է ժամանակական կանոն, որում Հայոց ՃՀԲ (172) թուին դրուած է. «Ժողովն Մանազկերտոյ, որում զխմորն եւ զջուրն ի խորհրդոյ բարձին»[68]: Անկասկած է, որ Սամուէլ Անեցու երկում ու նաեւ յիշեալ ձեռագրում խօսքը միեւնոյն ժողովի մասին է, եւ դա էլ հէնց այն ժողովն է, որ Սարկաւագի մօտ դրուած է Հայոց 173 թուին, այսինքն՝ Քրիստոսից 726 տարի անց: Միւս կողմից՝ այս ժողովի առթիւ Սարկաւագի ժամանակագրութեան մէջ նշուած է Յովհան Տեկորեցին: Մինչդեռ այս նոյն Յովհան Տեկորեցու մասին յիշեալ ձեռագրի ժամանակական կանոնում նշուած է Հայոց Լ (30) թուին, ինչ-որ չորրորդ ժողովի կապակցութեամբ. «աղվանք քաղկիդոնիկ եղեն. ժողով արարին չոր-

© National Library of Armenia

ղորդ զհա[յ]ոց վարդապետքն եւ նոքա հաւանեցան եւ զյոհան ի տեկորա ի կարին կաթողիկոս նստուցին»[69]:

Ակնյայտ է, որ ժամանակագրութեան այս մասում կայ լուրջ աղաւաղում: «Քաղաքի ժողով ի սուրբ Կաթողիկէն» նշանակում է Վաղարշապատի ժողով՝ Ս. Էջմիածին մայր տաճարում: Սա դժուար թէ շփոթուէր Մանազկերտի հետ: Ուստի, մնում է եզրակացնել, որ այստեղ մի կարեւոր հատուած բաց է թողնուած նախնական բնագրից:

Հայոց ՃՀԳ (173) թուականին մօտ՝ այլ աղբիւրներում ունենք Մանազկերտի նշանաւոր ժողովը, որ գումարել է Յովհան Օձնեցի հայրապետը, ուր եւ նզովուել է Քաղկեդոնի դաւանանքը: Սամուէլ Անեցին Քրիստոսի 727-ին դնում է Մանազկերտի ժողովը, որ, ըստ նրա ժամանակագրական համակարգի, կը լինի Հայոց 174 թուին[70]: Ըստ Արշակ Տէր-Միքելեանի, Յովհան Օձնեցին ինքը Մանազկերտի ժողովը դրել է Հայոց ՃՀԵ (175) թուի Տրէ ամսի 7-ին[71]: Ասողիկն էլ Մանազկերտի ժողովը դրել է Օձնեցու 11-ամեայ հայրապետութեան ընթացքում, որն ըստ նրա՝ պիտի եղած լինի Հայոց 171-182 թուերին[72]: Մաշտոցեան Մատենադարանի թիւ 2679 ձեռագրում էլ Մանազկերտի ժողովը դրուած է Հայոց ՃՀԲ (172) թուին[73]: Ուրեմն, ստանում ենք, որ Հայոց 170-ական թուականներին եղել է իրօք Մանազկերտի ժողովը, եւ, ըստ այդմ, Յովհաննէսի ժամանակագրութեան մէջ նշուած ժամանակը, որ ճշդեցինք իբր Քրիստոսի 726 թ., վերաբերում է հէնց Մանազկերտի ժողովին (եւ ոչ Քաղաքի ժողովին ի Ս. Կաթողիկէն): Յովհան Տեկորեցին էլ, եթէ դնենք Հայոց Լ (30) թուին, ինչպէս տալիս է ՄՄ. թիւ 2679 ձեռագիրը, կը լինի Քրիստոսից 583 տարի յետոյ, որ միայն 16 տարով է տարբերւում Քաղաքի ժողովի համար (տարբեր ժողովների տարիներն իրար գումարելով) վերն ստացուած 599 տարուց: Սրանից էլ կարելի է հետեւեցնել, որ Յովհաննէսի ժամանակագրութեան սոյն հատուածում իրօք ունենք բացթողում: Բաց թողնուած հատուածը եղել է «գյորում որոշեցին Յոհան Տիկորեցին»-ից յետոյ եւ դրան յաջորդող՝ «Եւ էր թուական Հայոց ՃՀԳ (173)» նախադասութիւնից առաջ: Այսինքն, Յովհան Տեկորեցու մասին տեղեկութիւնը իրօք վերաբերում է Քաղաքի Ս. Կաթողիկէի ժողովին եւ ժամանակով ընկնում է Զ դարի վերջերը՝ 583-600 թթ., իսկ Հայոց 173 թուականը եւ Ս. Գրիգորի ելքից 424 (տարբեր բնագրերում՝ 533, 433) տարի յետոյ եւ Ս. Գրոց թարգմանութիւնից էլ 300 տարի անց լինելը վերաբերում են Մանազկերտի ժողովին: Ուրեմն, մեզ հասած բնագրից բացակայող հատուածում, ի թիւս այլ բաների, խօսուել է նաեւ Մանազկերտի ժողովի մասին:

Այսինքն, Սարկաւագի ժամանակագրութեան սոյն հատուածում նախապէս տեղեկութիւններ են եղել առնուազն երկու ժողովների մասին՝ Քաղաքի ժողովն ի Ս. Կաթողիկէն եւ Մանազկերտի ժողովը: Սրանցից երկրորդի ժամանակը ըստ Սարկաւագի արդէն ճշդեցինք. դա է Հայոց 173 թ., որ է Քրիստոսից 726 տարի:

Արդ, փորձենք ճշդել նաեւ առաջինի՝ Քաղաքի ժողովի ու դրան նախորդած միւս ժողովների ժամանակները:

Քաղաքի ժողովի ժամանակի որոշման համար կարող են հիմք ծառայել միայն նախորդ ժողովների տարիները, քանի որ յաջորդ տարիները, ինչպէս պարզեցինք, վերաբերում են Մանազկերտի ժողովին: Վերն արդէն նշուեց, որ

տարբեր ժողովների տարիներն իրար գումարելով ստացւում էր Քրիստոսի ծնունդից մինչ Քաղաքի ժողովը 599 տարի: Այս թուի ճշդութիւնը այնքան էլ յուսալի չէ, քանի որ այն բաղադրուած է 6 տարբեր գումարելիներից: Ստորեւ աղիւսակի տեսքով համեմատենք այդ գումարելիների սարկաւագեան արժէքները դրանց յայտնի իրական արժէքների հետ:

Միջակայքը	Իրական արժէք	Սարկաւագի մօտ	Սարկաւագ (տարբերակ)
Քրիստոսի ծննդից Նիկիոյ ժողովը	329[74]	323	322
Նիկիայից Կ. Պոլսի ժողովը	56	73	74
Կ. Պոլսից Եփեսոսի ժողովը	50	50	
Եփեսոսից Քաղկեդոնի ժողովը	20	27	
Քաղկեդոնից Դուինի ժողովը		36	
Դուինից Քաղաքի ժողովը		90	

Այս աղիւսակի երրորդ տողում ունենք թուերի լիակատար համընկում: Կարելի է այս հիման վրայ Սարկաւագի տուած 50 տարին համարել ճշգրիտ բնագրային արժէք[75]:

Հնարաւոր է չորրորդ տողում Սարկաւագի տուած 27 տարին էլ (Եփեսոսից Քաղկեդոն) դիտել իբր նախապէս եղած 20-ի աղաւաղում: 27-ը գրւում է ԻԷ, եւ կարող էր նախապէս Է-ն առանձին լինել Ի (20)-ից եւ ունենար օժանդակ բայի (կամ այլ) արժէք: Ընդ որում, այս տեղում շարադրանքն այնպէս է, որ կարող էր Է օժանդակ բայը լինել ե՛ւ առաջին նախադասութեան վերջում, ե՛ւ էլ երկրորդի սկզբում[76]: Ընդունելով այս շտկումը, կարող ենք համարել, որ Սարկաւագի բնագրում այս թիւը եւս համընկնում է իր իրական արժէքին[77]:

Հնարաւոր է աղաւաղման արդիւնք համարել նաեւ Քրիստոսից Նիկիայ տարիների թիւը: Ինչպէս տեսանք, այդ տարիների իրական արժէքը 329 է[78]: Իսկ Սարկաւագի ժամանակագրութեան Հ. Ոսկեանի տարբերակում սոյն տեղում ունենք 322 (ՅԻԲ): Այս թուի վերջին նիշը՝ Բ (2) կարող էր առաջանալ Թ (9)-ի աղաւաղումից (որոշ գրատեսակների պարագայում դա հնարաւոր է): Ըստ այսմ էլ հնարաւոր է ենթադրել, որ Սարկաւագի նախնական բնագրում այստեղ եղել է ՅԻԹ (329), այսինքն, այստեղ էլ բնագրային նախնական թիւը համապատասխանել է դրա իրական արժէքին:

Մնում է մեր աղիւսակի երկրորդ տողի թուերի հարցը: Նիկիոյ ժողովից Կ.-Պոլսի ժողովի համար Սարկաւագի բնագրում ունենք 73, կամ 74 տարի: Սրա իրական արժէքը 56 է: 56 (ԾԶ)-ը 73 (ՀԳ), կամ 74 (ՀԴ) «դարձնելը» դժուար է: Այս թուի երկրորդ թուանշանը՝ 6 (զ) կարող էր յառաջանալ 3 (գ)-ից, կամ 4 (դ)-ից՝ պարզ աղաւաղմամբ: Միեւնոյն ժամանակ, համարեա անկարելի է յիսունը եօթանասուն դարձնելը (Ծ→Հ): Այսինքն, այս մի թուի հարցը մնում է բաց: Միեւնոյն ժամանակ, եթէ ընդունենք մեր աղիւսակի միւս թուերի կապակցութեամբ վերն արուած դատողութիւնները, եւ համարենք դրանց բնագրային նախնական արժէքները իրենց իրական արժէքներին համընկնող, ապա բնականօրէն պիտի ընդունենք նաեւ, որ իր իրական արժէքին պիտի համապատասխանի նաեւ Նիկիայից

© National Library of Armenia

Կ.Պոլսի ժողով տարիների համար Սարկաւագի տուած թիւը: Այսինքն, եթէ ընդունում ենք վերի թուերի համար առաջարկուած բնագրային շտկումները, ապա ինքնաբերաբար պարտաւոր ենք ընդունել նաեւ, որ նախնական բնագրում 74 (ՀԴ), կամ 73 (ՀԳ)-ի տեղում եղել է 56 (ԾԶ): Սա էլ կը նշանակի, որ Սարկաւագի ժամանակագրութեան նախնականում Նիկիայի, Կ.Պոլսի, Եփեսոսի եւ Քաղկեդոնի ժողովների ժամանակները տրուած են եղել ճիշտ:

Ժողովների ժամանակը ճշտելուն կարող է օգնել նաեւ Յովհաննէսի «Մեկն. Տումարիս Հայկազնեայ» երկի հետեւեալ հատուածը, որում տրուած է նաեւ Նիկիոյ ժողովի ժամանակը. «Ի ՃՂԵ (195) ղիմպիադի ծնաւ Քրիստոս: Ի ՄԿԹ (269) [ղիմպիադին] սուրբ Հռիփսիմեանքն եկին ի Հայք: Ի ՄՀ (270) ղիմպիադին Սուրբն Գրիգոր ձեռնադրի հայրապետ Հայոց: Ի ՄՀԷ (277) ղիմպիադին սուրբ ժողովն Նիկիայ եղ-» (էջ 228): Սրա հետ մէկտեղ ունենք նաեւ, որ Սարկաւագը Քրիստոսի ծնունդը դրել է Ն. Ք. 5 թ. Յունուարի 6-ին[79], որ է Ol.193.3-ը (այսինքն, 193-րդ օլիմպիադի 3-րդ տարին, որ սկսուել է Ն.Ք. 6 թ. ամռանը): Այսինքն, վերի մէջբերեալ հատուածում տրուածը (195-րդ օլիմպիադ) ներդաշնակ չէ այլ կերպ տրուածին: Սրանց միջեւ առկայ է առնուազն 6 տարուայ տարբերութիւն:

Նիկիոյ ժողովի համար էլ այս հատուածում տրուած է 277-րդ օլիմպիադը: Իսկ այդ ժողովը եղել է Փ. 325 թ., որ կը լինի Ol.275.4 (եթէ ժողովն եղել է մինչ 325 թ. Յուլիսի 8-ը), կամ Ol.276.1 (եթէ ժողովն եղել է 325 թ. Յուլիսի 8-ից յետոյ): Այսինքն, այսպէս թէ այնպէս, ժողովի ժամանակը վերոբերեալ հատուածում տրուած է առնուազն 4 տարուայ սխալով:

Ինչպէս տեսնում ենք, սոյն հատուածում օլիմպիադներով Սարկաւագի տուած ե՛ւ Քրիստոսի ծննդեան, ե՛ւ էլ Նիկիոյ ժողովի տարիները ներդաշնակ չեն այլ տեղերում Սարկաւագի տուած Քրիստոսի ծննդեան ժամանակին եւ Նիկիոյ ժողովի իրական ժամանակին:

Միեւնոյն ժամանակ, եթէ զանց առնենք այս թուականների անհամաձայնութիւնը, եւ նայենք ոչ թէ իրադարձութիւնների ստոյգ ժամանակները, այլ դրանց միջեւ եղած ժամանակամիջոցները, կը գտնենք բաւական լաւ ներդաշնակութիւն: Այսպէս. վերի հատուածից կարելի է եզրակացնել, որ Նիկիոյ ժողովը դրուել է Քրիստոսի ծնունդից 277–195=82 օլիմպիադ յետոյ, որ մօտաւորապէս 82×4=328 տարի է: Իսկ աւելի ստոյգ՝ ժամանակը 195-րդ օլիմպիադից մինչ 277-րդ օլիմպիադը կարող է լինել 325 տարուց (Ol.195.4-ից Ol.277.1-ը) 331 տարի (Ol.195.1-ից Ol.277.4-ը): Այսինքն, կայ 6 տարուայ անորոշութիւն: Սրա հետ մէկտեղ, ունենք նաեւ, որ ըստ Սարկաւագի կիրառած Քրիստոսի ծննդեան թուականի, Քրիստոսից մինչ Նիկիոյ ժողովը 329 տարի է (տե՛ս ծանօթ. 37), եւ այս 329 տարին էլ լիովին ներդաշնակ է ըստ օլիմպիադների ստացուած 325-331 տարիների միջակայքին: Այսինքն, թէպէտ Քրիստոսի ծննդեան համար տրուած օլիմպիադի տարին (195) չի համապատասխանում այլ կերպ տրուած ժամանակին՝ (Ն. Ք. 5 թ. Յունուարի 6, որ է Ol.193.3), այդուհանդերձ, Քրիստոսից Նիկիայ ժամանակահատուածը՝ ըստ տրուած օլիմպիադների, չի հակասում դրա իրական արժէքին:

Փաստօրէն, ժողովների վերաբերեալ տրուած 4 թուերից նոյնութեամբ ընդունուած է միայն մէկը, երկուսը շտկուած են՝ հիմք ունենալով հնարաւոր աղաւաղումներն ու այդ թուերի իրական արժէքները, եւ մի թիւ էլ (դրա երկու թուանշաններից գոնէ մէկը) համարուած է էապէս աղաւաղեալ:

Անշուշտ, այս ժողովների ժամանակների այսպիսի շտկումները անվերապահօրէն ընդունել չենք կարող: Բնագրի 3 - 4 տողանոց մի հատուածի մէջ այսքան շատ շտկումները, մեղմ ասած, նուազեցնում են դրանց հաւաստիութեան աստիճանը: Միեւնոյն ժամանակ, սակայն, ինչպէս վերը տեսանք, բնագրի հէնց այս նոյն հատուածը մեզ է հասել այլ՝ ոչ պակաս լուրջ աղաւաղումով. դրանից բաց է թողնուել մի հատուած, ուր խօսք է եղել գոնէ Մանազկերտի ժողովի մասին: Այսինքն, բնագրի այս մասը արդէն իսկ էապէս աղաւաղուած է, եւ դա էլ նշանակում է, որ մեծ է այդ նոյն մասում այլ աղաւաղումներ լինելու հաւանականութիւնը: Այսպէս թէ այնպէս, ժողովների համար մեր վերականգնած թուականները ճիշդ կը համարենք միայն որոշ վերապահութեամբ:

Այսպիսով, մեր ուղղումներով կ՚ունենանք ըստ եօթանասնից համակարգի՝ Քրիստոսի ծնունդից Նիկիոյ ժողովը՝ 329 տարի, որով կը լինի Ադամից Նիկիոյ ժողով՝ 5527 տարի: Նիկիայից Կ. Պոլսի ժողովը՝ 56 տարի, որով կը լինի Ադամից Կ.Պոլսի ժողովը 5583 տարի: Կ. Պոլսի ժողովից Եփեսոսի ժողովը՝ 50 տարի, եւ Ադամից Եփեսոսի ժողովը՝ 5633 տարի: Եւ Եփեսոսից էլ Քաղկեդոն՝ 20 տարի, որով եւ՝ Ադամից Քաղկեդոնի ժողովը՝ 5653 տարի:

Գալով Դուինի եւ Քաղաքի ժողովներին, սրանց ժամանակը գտնելու համար ժամանակագրութեան մէջ տրուած թուերից զատ ոեւէ այլ տեղեկութիւն չունենք Սարկաւագի գործերի մէջ, ուստի հէնց դրանց վրայ էլ կը հիմնուենք: Դուինի ժողովի համար տրուած է՝ Քաղկեդոնի ժողովից 36 տարի անց: Դա կը լինի Ադամից 5653+36=5689 տարի: Քրիստոսի ծնունդից էլ կը լինի 329+56+50+20+36=491 տարի:

Քաղաքի ժողովի համար էլ տրուած է՝ Դուինի ժողովից 90 տարի յետոյ, որ կը լինի Ադամից՝ 5689+90=5779 տարի եւ Քրիստոսից՝ 491+90=581 տարի:

Այսպիսով, այս ժողովների տարիների հարցը կարող ենք համարել սպառուած (անշուշտ՝ մեր հնարաւորութեան սահմաններում):

Մեր ցուցակի այս հատուածն ամբողջացնելու համար մնում է պարզել նաեւ Մովսէս Եղիվարդեցու կաթողիկոսութեան եւ Ս. Ցիզտբուզիտի վկայութեան ժամանակները: Մովսէս կաթողիկոսի մասին ժամանակագրութեան մէջ ունենք. «Ի սրբոյն Գրիգորէ մինչեւ ի հայ թուականն ամք ՄԾԲ (252)[80]: Մինչեւ ի տէր Մուսէս կաթողիկոս՝ ԻԴ (24), յորո[յ] տասն ամի թուականն Հայոց եղաւ» (էջ 132): Մի քանի տող վարն էլ ունենք. «Յառաջին թուականին սուրբն Ցիզտբուզիտ վկայեաց: Հռոմայեցոց՝ Յուստիանոս, Պարսից՝ Խոսրով, Հայոց՝ մարզպան Մեժէժ, կաթուղիկոս՝ Մուսէս» (էջ 132-133): Այս առաջին հատուածում տրուած է, որ Մովսէսի 10-րդ տարում դրուել է Հայոց թուականը: Դա կը նշանակի, որ Մովսէսը կաթողիկոս է դարձել Հայոց թուականից 9 տարի առաջ:

Սրա հետ մէկտեղ, Սարկաւագից Յակոբ Ղրիմեցու համառօտած երկում Հայոց թուականի դրուելու ժամանակի մասին գրուած է. «Զթուականս եդին ի ժամանակս երկրորդ Յուստիանոսի կայսեր,... ի ԻԲ ամին սորա ... եւ հայոց սպարապետ Մեժէժ

© National Library of Armenia

Գնուեցոյ ի տաս ամին եւ ի տէր Մովսէս կաթողիկոսին, որ երկոտասաներորդն էր ի Լուսաւորչէն, ի չորրորդ ամի սորա, զոր ոմանք յայլոց [այլ] ասացին, բայց սա է ճշմարիտն» (էջ 295): Այստեղ էլ Հայոց թուականի հիմնումը դրուած է Մովսէսի 4-րդ տարում: Այսինքն, ըստ սրա էլ Մովսէսի առաջին տարին Հայոց թուականից 3 տարի առաջ է: Ակնյայտ է, որ գործ ունենք աղաւաղուած տուեալների հետ: Ո՞րն է այս տուեալներից հեղինակայինը:

Ինչպէս այլ առիթով ցոյց է տրուել, Հայոց թուականը դրուել է Մովսէսի առաջին տարում[81]: Իսկ Մովսէսի 10-րդ տարում դրուել է էասեան Շ.եակը[82]:

Սրա հետ մէկտեղ ունենք նաեւ, որ բազմաթիւ հայ հեղինակների երկերում իրար հետ շփոթուած են Հայոց թուականի դրուելն ու Շ.եակի դրուելը[83]: Այնպէս որ, լիովին հնարաւոր է, որ Սարկաւագը եւս Հայոց թուականի սկիզբը դնէր Մովսէսի 10-րդ տարում: Ինչ վերաբերում է Յ. Ղրիմեցու համառօտած երկում տրուած 4-րդ տարուն, ապա այս չորրորդը (դ) կարող էր յառաջ եկած լինել գ-(երրորդից)[84]: Իսկ այս երրորդն էլ, իր հերթին, կարող էր առաջացած լինել Ժ.երորդ (10-րդ)-ից:

Այսպիսով, ըստ Սարկաւագի, Մովսէսի գահակալութիւնը լինում է Հայոց թուականից 9 տարի առաջ, որ կը լինի Քրիստոսի ծնունդից 554–9=545 տարի յետոյ: Իսկ Ադամից էլ կը լինի 545+5198=5743 տարի յետոյ:

Ս. Յիզտբուզիտի վկայութիւնն էլ Հայոց առաջին թուականին է: Սրա համար ունենք. «Յառաջին թուականին սուրբն Յիզտբուզիտ վկայեաց» (էջ 132): Սա էլ կը լինի Քրիստոսից 554 տարի եւ Ադամից՝ 5752 տարի յետոյ:

Արդ, աղիւսակի տեսքով տանք վերը քննարկուած՝ Ս. Գրիգորից մինչեւ Շ.եակի սկիզբն ու քաղաքի ժողովը եղած ժամանակի համար մեր ստացած արդիւնքները: Յարմարութեան համար սոյն աղիւսակի մէջ կ'ընդգրկենք նաեւ Ադամի արտաքսումը, Քրիստոսի ծնունդը եւ Փիլիպպոսի 5-րդ տարին:

*	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ	ԺԱ	ԺԲ	ԺԳ	ԺԴ	ԺԵ	ԺԶ	ԺԷ	ԺԸ
Ա	*	5198	5448	5500	5527	5529	5552	5583	5608	5624	5633	5653	5689	5743	5752	5752	5761	5779
Բ	5420	*	250	302	329	331	354	385	410	426	435	455	491	545	554	554	563	581
Գ	5672	252	*	52	79	81	104	135	160	176	185	205	241	295	304	304	313	331
Դ	5724	304	52	*	27	29	52	83	108	124	133	153	189	243	252	252	261	279
Ե	5751	331	79	27	*	2	25	56	81	97	106	126	162	216	225	225	234	252
Զ	5753	333	81	29	2	*	23	54	79	95	104	124	160	214	223	223	232	250
Է	5776	356	104	52	25	23	*	31	56	72	81	101	137	191	200	200	209	227
Ը	5807	387	135	83	56	54	31	*	25	41	50	70	106	160	169	169	178	196
Թ	5832	412	160	108	81	79	56	25	*	16	25	45	81	135	144	144	153	171
Ժ	5848	428	176	124	97	95	72	41	16	*	9	29	65	119	128	128	137	155
ԺԱ	5857	437	185	133	106	104	81	50	25	9	*	20	56	110	119	119	128	146
ԺԲ	5877	457	205	153	126	124	101	70	45	29	20	*	36	90	99	99	108	126
ԺԳ	5913	493	241	189	162	160	137	106	81	65	56	36	*	54	63	63	72	90
ԺԴ	5967	547	295	243	216	214	191	160	135	119	110	90	54	*	9	9	18	36
ԺԵ	5976	556	304	252	225	223	200	169	144	128	119	99	63	9	*	0	9	27
ԺԶ	5976	556	304	252	225	223	200	169	144	128	119	99	63	9	0	*	9	27
ԺԷ	5985	565	313	261	234	232	209	178	153	137	128	108	72	18	9	9	*	18
ԺԸ	6148	728	476	424	397	395	372	341	316	300	291	271	235	181	27	27	18	*

Այս աղիւսակում ձախ եզրային սիւնակում եւ վերեւի տողում հայատառ թուանշաններով նշանակուած են հետեւեալ իրադարձութիւնները:

Ա Ադամի արտաքսումը,
Բ Քրիստոսի ծնունդը,
Գ Փիլիպպոսի 5-րդ տարին,
Դ Ս. Գրիգորի ելն ի վիրապէն,
Ե Նիկիոյ ժողովը,
Զ Կոստանդիանոսի 20ամեակը
Է Անդրէասի 200-եակի սկիզբը,
Ը Կոստանդնուպոլսի ժողովը,
Թ Ս. Սահակ Պարթեւ,
Ժ Ս. Գրքի թարգմանութիւնը,
ԺԱ Եփեսոսի Ա ժողովը,
ԺԲ Քաղկեդոնի ժողովը,
ԺԳ Դուինի ժողովը,
ԺԴ Մովսէս Եղիվարդեցի,
ԺԵ Ս. Յիզտբուզիտի վկայութ.,
ԺԶ Հայոց թուականի սկիզբը,
ԺԷ Շ.եակի սկիզբը,
ԺԸ Քաղաքի ժողովը:

Այս աղիւսակում եւս աստղանիշ անկիւնագծից վար ու ձախ տրուած են տարիներն ըստ Շ.եակի համակարգի: Միայն, ի տարբերութիւն առաջին աղիւսակի[85], ուր Շ.եակի մասում լրացուած էին միայն վանդակներն այն իրադարձութիւնների, որոնց համար ուղղակի, կամ անուղղակի տրուած էին տարիներն ըստ Շ.եակի համակարգի, այս՝ երկրորդ աղիւսակում Շ.եակի մասը լրիւ լրացուած է: Բանն այն է, որ Անդրէասի 200-եակից յետոյ Շ.եակի եւ եօթանասնից համակարգերն ընթանում են լրիւ զուգահեռ, եւ այդ հատուածի վանդակներում թուերը նոյնն են, ինչ որ դրանց համապատասխան աջակողմեան վանդակներում:

Այս աղիւսակում ԺԶ համարով սիւնակը իր նախորդ՝ ԺԵ սիւնակի կրկնութիւնն է (նոյնը վերաբերում է եւ ԺԶ տողին, որն էլ կրկնութիւնն է ԺԵ տողի): Պատճառն այն է, որ Ս. Յիզտբուզիտի վկայութիւնը ըստ Սարկաւագի՝ Հայոց թուականի սկզբում է, որով եւ այդ իրադարձութիւնները համաժամանակ են:

Յաջորդը մեր ցուցակում Երուսաղէմի գրաւումն է Պարսից կողմից: Սրա համար ունենք. «ԼԷ (37) թուականին Հորիան Պարսից զօրավար առ զԵրուսաղէմ» (էջ 133)[86]: Սարկաւագի այս տեղեկութիւնը ակնյայտօրէն կամ իր տեղում չէ, կամ էլ եղծուած է: Ներկայումս ընդունուած է Երուսաղէմի առումը Պարսից կողմից դնել Քրկչ. 614-ին[87]: Իսկ Հայոց 37 թիւը կը տայ Քրկչ. 588 թ., որ 26 տարով աւելի վաղ է արդ ընդունուած իրական ժամանակից: Այսքան մեծ շեղում Յովհաննէսի ժամանակագրական համակարգում դժուար թէ լինէր: Համոզուելու համար՝ համեմատենք Սարկաւագի մի քանի տուեալները նրա աշակերտ Սամուէլ քահանայի համապատասխան տուեալներին:

© National Library of Armenia

	Սամուէլ Անեցի		Սարկաւագ վարդապետ
ՇԿԲ: (Թ:)	Ի սմին ամի եդաւ Շ.եակն:	Ի տաս	թուականին եդաւ հինգհարիւրեակն:
ՇԿԴ: (ԺԱ:)	Իոիոն պատառեաց զկանոն զատկին:	Ի ԺԱ (11)	թուականին Իոոն պատառեաց զկանոն Զատկին:
ՈՒԷ:	Աստանօր ի բաց կացին վիրք ի միաբանութենէն Հայոց՝ հաւանեալք աղանդոյն Քաղկեդոնի՝ ի ձեռն կիրոնի Վրաց առաջնորդի:	ՀԳ (73)	թուականին ի բաց կացին վիրք ի միաբանութենէն հայոց ի ձեռն Կիրոնի:
ՈԼ:	Տէր Կոմիտաս ամս Ը: Մեծ պատրիարքն Տէր Կոմիտաս՝ շինէ զսուրբ տիկնոջն Հռիփսիմէի զվկայարանն (էջ 75-79):	ՀԶ (76)	թուականին մեծ պատր[ի]ա[ր]գն Կոմիտաս շինէ զսուրբ տիկնոջն Հռիփսիմեայ զվկայարանն (էջ 133):

Ինչպէս երեւում է համեմատութիւնից, Սարկաւագի եւ Սամուէլի տուած թուերը միեւնոյն դէպքի համար նոյնն են (գոնէ ժամանակագրութեան այս հատուածում): Առաջին տողում եղած զանազանութիւնը՝ աջ կողմում՝ տաս, իսկ ձախում՝ ինը թուական, հետեւանք է այն բանի, որ Շ.եակը դրուել է Հայոց օրացոյցի հիմնումից 9 տարի անց, որ եղել է Հայոց 10 թուականը: Այս 9 եւ 10 տարիները շատ յաճախ են իրար հետ շփոթուել տարբեր հեղինակների երկերում: Դա արդիւնք է պարզ շփոթութեան, եւ, ըստ այսմ, սոյն տարբերութիւնը էական չէ: Միակ «լուրջ» զանազանութիւնն այն է, որ առաջին երկու թուերի դէպքում Քրիստոսի ծննդեան եւ Հայոց թուականի տարբերութիւնը 553 է, իսկ վերջին երկուսի դէպքում՝ 554[88]: Այսինքն, Սամուէլ քահանան հետեւել է Սարկաւագի ժամանակագրական համակարգին: Ուրեմն, այս ժամանակամիջոցում միւս իրադարձութիւնների համար էլ Սամուէլի ու Յովհաննէսի տուած ժամանակները պիտի համընկնեն: Այնինչ, Երուսաղէմի առման համար, ի հակադրութիւն Սարկաւագի ժամանակագրութեան մեզ հասած տարբերակի (ուր տրուած է Հայոց ԼԷ (37) թուական), Սամուէլը տալիս է. «ՈԻԳ: (623) Պարսիկք զԵրուսաղէմ առին՝ եւ տարան զխաչն գերի՝ յամս Հերակլի» (էջ 79): Այսինքն, Սամուէլը խաչափայտի գերումը (եւ Երուսաղէմի առումը) դրել է Վրաց բաժանումից (Հայոց 73 թ.) 4 տարի առաջ, որ կը լինէր Հայոց 69 (ԿԹ) թուականը[89]: Ե՛ւ 69 (ԿԹ), Ե՛ւ էլ 70 (Հ) թուերը այնպիսին են, որ քիչ հաւանական է աղաւաղուելով դրանց 37 (ԼԷ)-ի վերածուելը[90]: Չի բացառուում, որ Սարկաւագի բնագրում նախապէս հէնց 37 էլ եղած լինի, միայն թէ՝ դա վերաբերած լինի այլ իրադարձութեան, իսկ Երուսաղէմի առման թուականը պարզապէս ջնջուած-կորած լինի: Այսպէս թէ այնպէս՝ ժողովների տարիների քննութիւնն արդէն ցոյց տուաւ, որ Սարկաւագի ժամանակագրութեան՝ ժողովներին վերաբերող հատուածը լրջօրէն խաթարուած է, եւ, ըստ այդմ, չի բացառուում, որ այդ նոյն վիճակում լինէր նաեւ դրան կից այս հատուածը եւս: Ամեն դէպքում, անկախ այս աղաւաղման բուն պատճառից ու կերպից, հիմք ընդունելով Սարկաւագի եւ Սամուէլի ժամանակագրութիւնների

այս հատուածի ընդհանրութիւնը, Երուսաղէմի առման համար Սարկաւագի տուած 37-ը կը համարենք հաստատ աղաւաղում, եւ այդ թիւը կը վերականգնենք ըստ Սամուէլ Անեցու, ընդունելով դրա արժէքը 69 (ԿԹ): Քրիստոսի ծնունդից Երուսաղէմի առումը կը լինի 69–1[91]+554=622, իսկ Ադամից էլ կը լինի՝ 622+5198=5820 տարի:

Յաջորդը Վրաց բաժանումն է: Սրա համար Սարկաւագի մօտ ունենք. «ՀԳ (73) թուականին ի բաց կացին վիրք ի միաբանութենէն հայոց ի ձեռն Կիրոնի» (էջ 133)[92]: Ինչպէս քիչ վերը տեսանք, Վրաց բաժանման համար Սամուէլ Անեցին էլ տուել է Քրիստոսի ծննդեան ՈՒԷ (627) թիւը, որ նշանակում է, թէ ըստ նրա եւս Քրիստոսի ծնունդից մինչ Վրաց բաժանումը 627 (1=626 տարի է: Ըստ այսմ, Սարկաւագի տուած 73-ը ճիշդ կը համարենք: Ուրեմն, կը լինի Քրիստոսի ծնունդից Վրաց բաժանումը՝ 73+553=626 տարի, իսկ Ադամից էլ՝ 626+5198=5824 տարի:

Յաջորդը Ս. Հռիփսիմէի վկայարանի կառուցումն է Կոմիտաս Աղցեցու կողմից: Սրա համար տրուած է Հայոց 76 թուականը (տե՛ս վերի մէջբերումները, ուր Սարկաւագի տուեալները համեմատուած են Սամուէլ Անեցու տուեալների հետ): Սա էլ կը տայ Քրիստոսից 76+553=629 տարի. իսկ Ադամից՝ 629+5198=5827 տարի:

Կարնոյ ժողովի համար Սարկաւագը տալիս է. « Է (87) թուականին Հերակլ ժողով արար ի Կարնո[յ] քաղաք. կոչէ եւ զԵզր, որ տգիտաբար հաւանեցաւ» (էջ 133)[93]: Սամուէլի երկում էլ այս նոյն ժողովը դրուած է Քրիստոսի 640-ին (կամ դրանից յետոյ)[94]: Այնպէս որ, այս թուականի հարցում էլ հակասութիւն չկայ Յովհաննէսի եւ Սամուէլի ժամանակագրութիւնների միջեւ, ուստի, կարող ենք Սարկաւագի տուած 87-ը համարել հեղինակային հարազատ թուական՝ միայն մի վերապահութեամբ: Ելնելով նրանից, որ Սամուէլի մօտ Կարնոյ ժողովը դրուած է 85 թ. Երուսաղէմի առումից անմիջապէս յետոյ՝ առանց ինքնուրոյն թուականի, կարելի է հնարաւոր սեպել, որ այդ 85-ը վերաբերել է նաեւ Կարնոյ ժողովին[95]: Այս պարագայում հարկ կը լինի Սարկաւագի տուած 87-ը խմբագրել-դարձնել 85 (Ե→Է): Ընդունելով այս 87-ը, Կարնոյ ժողովի համար կը ստանանք Քրիստոսից 87+553=640 տարի, իսկ Ադամից էլ կը լինի 640+5198=5838 տարի[96]:

Հայաստան՝ արաբների առաջին ներխուժման մասին Սարկաւագը տալիս է նախորդից մի տարի յետոյ. «ՁԸ (88) թուականին՝ ելն տաճկաց ի հայս» (էջ 133)[97]: Սա կը տայ Քրիստոսից 88+553=641[98] տարի եւ Ադամից էլ 641+5198=5839 տարի յետոյ:

Զուարթնոցի կառուցման մասին Յովհաննէսի մօտ կայ. «ՃԲ (102) թուին հայրապետն Ներսէս շինէ զսուրբ Գրիգոր, եւ զսուրբ Սարգիս ի Դվին, եւ զՎիրապն» (էջ 133)[99]: Այս 102-ը կը տայ 102+553=655 տարի Քրիստոսից յետոյ: Իսկ Ադամից էլ կը լինի 655+5198=5853 տարի:

Մեր ցուցակում սրանից յետոյ Անանիա Շիրակունու օրացուցային բարեփոխումն է: Սարկաւագի մօտ այս մասին ունենք. «ՃԺԸ (118) թուականին հայրապետն Անաստաս կոչէ առ ինքն զմեծ Անանիա՝ անշարժ կարգել զտումար մեր: Եւ արարեալ մեծաւ ջանի» (էջ 133)[100]: Այս 118-ը կը տայ Քրիստոսից 118+553=671 տարի[101] յետոյ եւ Ադամից էլ՝ 671+5198=5869 տարի:

Մեր ցուցակում յաջորդը Մանազկեր-

© National Library of Armenia

տի ժողովն է: Այս ժողովի մասին թէպէտ յատուկ նշուած չէ Յովհաննէսի ժամանակագրութեան մեզ հասած տարբերակում[102], այդուհանդերձ, ինչպէս վերը տեսանք, դրա ժամանակը տրուած է երեք տարբեր ձեւերով՝ Հայոց թուականով, Ս. Գրիգորի տարիներով եւ Ս. Գրոց թարգմանութեան տարիներով: Ըստ այս տուեալների, Մանազկերտի ժողովը եղել է Քրիստոսից 726 տարի յետոյ: Ադամից էլ սա կը լինի 726+5198=5924 տարի յետոյ:

Երկրորդ Շ.եակի սկզբի համար Սարկաւագի մօտ տրուած է. «ՇԽԲ (542) թուին սկիզբն շրջանի Շ.եկին» (էջ 133)[103]: Այս 542-ը կը տայ Քրիստոսից 542+553=1095 տարի եւ Ադամից էլ՝ 1095+5198=6293 տարի: Երկրորդ Շ.եակի սկիզբը (ինչպէս եւ առաջինի սկիզբը) պայմանաւորուած է օրացուցային պարբերաշրջանների յատկութիւններով: Ուստի եւ կարելի է սրա իրական ժամանակը ճշդել զուտ օրացուցային առնչութիւնները հաշուի առնելով: Այսպէս. Հայոց 542 թիւը նշանակում է Հայոց թուականի սկզբից 541 տարի յետոյ, որ կը լինի 532-ամեայ մէկ շրջան եւ եւս 9 տարի: Այսինքն, այստեղ խօսքը ոչ թէ Հայոց թուականի երկրորդ 532-ամեակի մասին է, այլ Հայոց թուականի սկզբից 9 տարի յետոյ (Հայոց 10 թուին) սկսուած էասեան (աղէքսանդրեան) Շ.եակի մասին: Իրօք, Փ. 562 թուին սկսուել է Էաս Աղէքսանդրացու սահմանած եւ Աղէքսանդրիայի ժողովի ընդունած 532-ամեայ շրջանը, որի առաջին Զատիկը եղել է Փ. 562 թուի Ապրիլի 9-ին (Լուսնի աւագ լրումը՝ Ապրիլի 4-ին): Այս պարբերաշրջանը աւարտուել է Փ. 1093 թուին (լրումը Ապրիլի 15-ին, Զատիկը՝ Ապր. 17-ին): Սրա յաջորդ տարին պիտի սկսուի յաջորդ 532-ամեայ շրջանը: Այսինքն, երկրորդ Շ.եակի առաջին տարին կը լինի Փ. 1094 թ. (լրումը Ապր. 4-ին, Զատիկը՝ Ապր. 9-ին)[104]: Ուրեմն, աստ տրուած Հայոց 542-ն էլ պիտի համապատասխանի Փ. 1094-ին:

Ինչպէս վերը տեսանք, այս 542-ը տալիս է Քրիստոսի ծնունդից 1095 տարի յետոյ, որ կը նշանակի՝ Քրիստոսի ծննդեան 1096 թուական: Այս 1096-ը համընկնում է Սամուէլ Անեցու տուածին[105]: Միեւնոյն ժամանակ, ըստ Սամուէլի կիրառած համակարգի, այս 1096-ը կը լինի Հայոց 1096–553=543 թիւը, որ մի տարով աւելի է Սարկաւագի տուածից: Հայոց թուականով այս դէպքի իրական ժամանակը պարզելը դիւրին է: Այսպէս. քանի որ առաջին Շ.եակը սկսուել է Հայոց 10 թուին (Հայոց թուականի սկզբից 9 տարի անց), ապա երկրորդ Շ.եակն էլ պիտի սկսուած լինի առաջինից 532 տարի անց, այն է՝ 10+532=542 Հայոց թուին: Ուրեմն, Սարկաւագի տուածը համընկնում է իրական արժէքին, որով եւ այն կարող ենք համարել հարազատ բնագրային:

Վերջինը մեր ցուցակում ծռազատիկն է, որի մասին Յովհաննէսի մօտ ունենք. «ՇՄ (550) թուին՝ պատառումն զատկին» (էջ 133)[106]:

Ծռազատիկը (որ եւ՝ պատառումն Զատկի) եւս օրացուցային օրինաչափութիւններով պայմանաւորուած երեւոյթ է, եւ, ըստ այսմ, հնարաւոր է սրա ժամանակը եւս ճշգրտել օրացուցային միջոցներով: Սրա էութիւնն այն է, որ աղէքսանդրեան Շ.եակի համակարգում 19-երեակի առաջին տարուայ հռոմէական վերադիրը 9 է. այս նոյն համակարգն է որդեգրուած նաեւ Հայոց օրացոյցում: Սրան ի տարբերութիւն, Իրիոնի կազմած եւ Կոստանդնուպոլսում ընդունուած Շ.եակի համակարգում 19-երեակի առաջին տարուայ հռոմէական վերադիրը 10 է: Սա էլ բերում է նրան, որ երբ Հայերի ընդունած հռոմ. վերադիրը լինէր 7, եւ տարուայ հռոմ. եօթներեակն էլ՝ 3, ապա աւագ լրումը կը լինէր Ապրիլի 6-ին՝ կիրակի, ուստի եւ Հայոց Զատիկն էլ կ'ընկնէր դրա յաջորդ կիրակին՝ Ապրիլի 13-ին: Սրան հակառակ, Յոյները այդ նոյն տարում ունենում էին 8 վերադիր, որով եւ լրումը դնում էին Ապրիլի 5-ին՝ շաբաթ, ուստի եւ Զատիկ էին տօնում դրա յաջորդ օրը՝ Ապրիլի 6-ին: Այսինքն, Հայոց եւ Յունաց Զատիկները լինում էին մի շաբաթ տարբերութեամբ:

532 տարում այսպիսի դէպք լինում էր 4 անգամ: Հայոց ՇՄ (550) թուին իրօք եղել է հռոմ. վերադիրը 7, եօթներեակը՝ 3, լրումը՝ Ապրիլի 6-ին կիրակի եւ Զատիկն էլ՝ Ապրիլի 13-ին[107]: Այդ տարի Յունաց Զատիկը եղել է Ապրիլի 6-ին: Եւ դա էլ համապատասխանում է Փ. 1102 թուին, երբ արեւմտեան եկեղեցին Զատիկը տօնել է իրօք Ապրիլի 6-ին:

Այսպիսով, ծռազատիկի համար Սարկաւագի տուած Հայոց 550-ը համապատասխանում է իրական արժէքին: Քրիստոսի ծնունդից էլ կը լինի 550+553=1103 տարի, իսկ Ադամից՝ 1103+5198=6301 տարի յետոյ:

Արդ, աղիւսակի տեսքով տանք Երուսաղէմի առումից մինչ ծռազատիկ եղած իրադարձութիւնների ժամանակները: (Աղիւսակի կառուցուածքն ու դրանից օգտուելու կերպը նոյնն են, ինչ եւ Ա գլխի 1ա աղիւսակի պարագայում):

*	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ	ԺԱ	ԺԲ
Ա	*	554	622	626	629	640	641	655	671	726	1095	1103
Բ	556	*	68	72	75	86	87	101	117	172	541	549
Գ	623	68	*	4	7	18	19	33	49	104	473	481
Դ	627	72	4	*	3	14	15	29	45	100	469	477
Ե	630	75	7	3	*	11	12	26	42	97	466	474
Զ	640	86	18	14	11	*	1	15	31	86	455	463
Է	641	87	19	15	12	1	*	14	30	85	454	462
Ը	655	101	33	29	26	15	14	*	16	71	440	448
Թ	671	117	49	45	42	31	30	16	*	55	424	432
Ժ	726	172	104	100	97	86	85	71	55	*	369	377
ԺԱ	1095	541	473	469	466	455	454	440	424	369	*	8
ԺԲ	1103	549	481	477	474	463	462	448	432	377	8	*

Այս աղիւսակում հայատառ թուանշաններով նշանակուած են հետեւեալ իրադարձութիւնները.

Ա Քրիստոսի ծնունդը
Բ Հայոց թուականի սկիզբը
Գ Երուսաղէմի առումը
Դ Վրաց բաժանումը Հայերից
Ե Ս. Հռիփսիմէի վկայարանի կառուցումը
Զ Կարնոյ ժողովը
Է Արաբների առաջին ներխուժումը Հայաստան
Ը Զուարթնոցի կառուցումը
Թ Ա. Շիրակացու տոմարը
Ժ Մանազկերտի ժողովը
ԺԱ Երկրորդ Շ.եակի սկիզբը
ԺԲ Ծռազատիկ

Այսքանով կարող ենք ամբողջացուած սեպել Յովհ. Սարկաւագի ժամանակագրական համակարգի համառօտ քննութիւնը, ճշգրտումը եւ վերականգնման փորձը:

© National Library of Armenia

Արդ, որպէս արուած քննութեան ամփոփում, տանք բոլոր ճշգրտուած թուականները ժամանակագրական տարբեր համակարգերով:

ա	բ	գ	դ	ե	զ	ը	թ	ժ
Ա	Ադամի արտաքսումը							
Բ	Ենովքի փոխուելը	1487						
Գ	Զրհեղեղը	2242						
Դ	Աշտարակաշինութիւնը	2767						
Ե	Աբրահամի ծնունդը	3184						
Զ	Հրէից ելքը Եգիպտոսից	3689	3725				409	
Է	Տաճարի շինութիւնը	4169						962
Ը	Օլիմպիադի թուակ. սկիզբը	4424	4640					776
Թ	Տաճարի նորոգումը	4680						520
Ժ	Հերոդէսի թագ. սկիզբը	5167	5383					37
ԺԱ	Քրիստոսի ծնունդը	5198	5420	0	1		508	4
ԺԲ	Քրիստոսի մկրտութիւնը	5228	5450	30	31		6	28
ԺԳ	Թադէոս առաքեալը	5234	5456	36	37			
ԺԴ	Փիլիպպոսի 5-րդ տարին	5448	5672	250	251			248
ԺԵ	Ս. Գրիգորի ելն ի վիրապէն	5500	5724	302	303			
ԺԶ	Նիկիոյ ժողովը	5527	5751	329	330			325
ԺԷ	Կոստանդիանոսի 20-ամեակը	5529	5753	331	332			325
ԺԸ	Անդրէասի 200-եակի սկիզբը	5552	5776	354	355			353
ԺԹ	Կոստանդնուպօլսի ժողովը	5583	5807	385	386			381
Ի	Ս. Սահակ Պարթեւ	5608	5832	410	411			
ԻԱ	Ս. Գրքի թարգմանութիւնը	5624	5848	426	427			
ԻԲ	Եփեսոսի ժողովը	5633	5857	435	436			431
ԻԳ	Քաղկեդոնի ժողովը	5653	5877	455	456			451
ԻԴ	Դուինի ժողովը	5689	5913	491	492			
ԻԵ	Մովսէս Եղիվարդեցի	5743	5967	545	546			552
ԻԶ	Ս. Յիզտբուզիտի վկայութ.	5752	5976	554	555			552
ԻԷ	Հայոց թուականի սկիզբը	5752	5976	554	555	0	1	552
ԻԸ	Էասեան Շ.եակի սկիզբը	5761	5985	563	564	9	10	561
ԻԹ	Քաղաքի ժողովը	5779	6148	581	582	31	32	
Լ	Երուսաղէմի Պարս. առումը	5820		622	623	68	69	614
ԼԱ	Վրաց բաժանումը	5824		626	627	72	73	
ԼԲ	Ս. Հռիփսիմէի վկայարանի կառուցումը	5827		629	630	75	76	617
ԼԳ	Կարնոյ ժողովը	5838		640	641	86	87	
ԼԴ	Արաբների առաջին ներխուժումը Հայաստան	5839		641	642	87	88	640
ԼԵ	Զուարթնոցի կառուցումը	5853		655	656	101	102	
ԼԶ	Ան. Շիրակունու տոմարը	5869		671	672	117	118	
ԼԷ	Մանազկերտի ժողովը	5924		726	727	172	173	
ԼԸ	Երկրորդ 500-եակի սկիզբը	6293		1095	1096	541	542	1094
ԼԹ	Ծռազատիկ	6301		1103	1104	549	550	1102

Այս աղիւսակում հերթական սիւնակներում տրուած են.

Ա. Հերթական համարը:

Բ. Իրադարձութիւնը:

Գ. Ադամի արտաքսումից անցած տարիները ըստ եօթանասնից ժամանակագրական համակարգի:

Դ. Ադամի արտաքսումից անցած տարիները ըստ Շ.եակի համակարգի (չեն լրացուած այն վանդակները, որոնց համար կամ Սարկաւագի երկերում թուերը տրուած չեն, կամ էլ այդ դէպքերի ժամանակների համար Շ.եակի համակարգը չի կիրառուել):

Ե. Քրիստոսի ծնունդից անցած տարիները:

Զ. Թուականը՝ հաշուած Քրիստոսի ծննդեան տարուց (այս սիւնակի թուերը միշտ 1-ով աւելի են նախորդ սիւնակի թուերից, քանի որ թուականի համակարգում հաշուի մէջ է մտնում նաեւ դարագլուխ իրադարձութեան տարին՝ սոյն դէպքում՝ Քրիստոսի ծննդեան տարին, որ ունի 1 թուական):

Է. Տարիները՝ հաշուած Հայոց թուականի սկզբից:

Ը. Հայոց թուականը (այս սիւնակի թուերը միշտ 1-ով մեծ են նախորդ սիւնակի թուերից. պատճառը նոյնն է, ինչ եւ Զ. սիւնակի պարագայում):

Թ. Այստեղ տրուած են նշուած իրադարձութիւնների՝ այլ աղբիւրներից յայտնի ստոյգ տարեթուերը՝ Ն.Ք. եւ Փրկչական թուականներով: Բաց են թողնուած վանդակներն այն իրադարձութիւնների, որոնց համար ստոյգ թուեր յայտնի չեն: Ի տարբերութիւն միւս տարիների, Ն.Ք. տարիները նշուած են թանձր շրջագրով:

Օլիմպիադի համակարգով տարիները տրուած չեն, քանի որ օլիմպիադի համակարգը Սարկաւագի երկերում կիրառուած է յոյժ սահմանափակ, եւ, բացի այդ, օլիմպիադի համակարգով ժամանակները տրուած են հիմնականում՝ քառամեայ անորոշութեամբ, առանց նշելու տարուայ հերթական թիւը քառամեակի մէջ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

* Բիւրականի Աստղադիտարան, Արագածոտնի մարզ, 378433, Հայաստան, Byurakan Astrophysical Observatory, 378433, Armenia, e-mail address; gbrout@bao.sci.am

1 Սարկաւագ վարդապետից մեզ հասած երկերում ժամանակային տուեալները բաւական շատ են, եւ դրանց բոլորի համակարգում-ճշգրտումը մեծ ժամանակ եւ ուժեր պահանջող աշխատանք է: Թէպէտ այդ աշխատանքը կարեւոր է եւ շատ փափագելի, այդուհանդերձ, ամսագրային յօդուածի սահմաններում դա իրագործելի չէ: Այդ պատճառով էլ այստեղ կը սահմանափակուենք միայն որոշ՝ ըստ իս՝ առաւել կարեւոր իրադարձութիւնների ժամանակների քննութեամբ՝ զանց առնելով միւսերը: Իրադարձութիւնների կարեւորութիւնն էլ որոշում ենք զուտ տոմարագիտական նկատառումներից ելնելով:

2 Սարկաւագը իր երկերում բազմիցս նշում է, որ յայտնի չէ Աշխարհի արարչութեան ստոյգ ժամանակը, այլ միայն՝ Ադամի արտաքսման ժամանակը Դրախտից (տե՛ս, օրինակ, Աշ. Գ. Աբրահամեան, Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1956 (այսուհետեւ՝ Յովհաննէս Սարկաւագ), էջ 131, 217): Ըստ այսմ էլ Սարկաւագի երկերում Աշխարհի արարչութեան ժամանակի փոխարէն տրւում է Ադամի արտաքսման ժամանակը:

3 Յովհաննէսի ժամանակագրութեան բոլոր տարբերակներում էլ այստեղ գրուած է՝ Փիլիպպոսի 2-րդ տարի: Սա, փաստօրէն, Հռոմի հիմնադրման թուահաշուի առաջին հազարամեակի աւարտն է, որ է Փրկչ. 248 թուականը: Սրա յաջորդ տարին՝ Փ. 249-ը երկրորդ հազարամեակի առաջին տարին է: Այստեղից սկսուող թուահաշիւը, իբր Հռոմի թուական, լայնօրէն կիրառուել է հայ մատենագրութեան մէջ: Այս տարին, սակայն, Փիլիպպոս կայսեր ոչ թէ 2-րդ տարին է, այլ՝ 5-րդը, զի Փիլիպպոսը գահակալել է Փ. 244 թ. Մարտից մինչ Փ. 249 թ. Սեպտեմբերը, որով եւ՝ Փ. 248-ը նրա 5-րդ տարին է: Տոմարական պատճէնի մէջ էլ տրուած է. «*Կալ յեթն ամէն Փիլիպոսի կայսեր մինչեւ յերեսուն եւ չորս ամն Յուստիանոսի գ, որ լինին ամք ՅԴ(304)*» (էջ 210):

© National Library of Armenia

Այս նոյնը կայ եւ այլ տեղերում. օր. ՄՄ. թիւ 2001 ձեռագրում (էջ 21բ) կայ. «*կալ յէ ամէն փիլիպոսի կայսեր մինչեւ յդ ամն յուստիանոսի կայսեր. եւ ի իդ խոսրովու պարսից արքայի. որ լինին ամք յդ.* (բնագրում՝ *յգ* է, եւ լուսանցքում էլ շտկուած է՝ *յդ* - Գ.Բ.). *եւ զհայ թուականն ի վերայ բեր...»:* Փիլիպպոսի 7-րդ տարին է տրուած նաեւ այլ տեղերում. օրինակ՝ ՄՄ. ձեռ. թիւ 1999, էջ 82ա: Փիլիպպոս Արաբը գահակալել է միայն 6 տարի, ուստի եւ չէր կարող լինել նրա 7-րդ տարին: Հաւանական է, նախապէս այստեղ եղել է *5(Ե)*-րդ, որ շփոթուելով դարձել է *7 (Է)*-րդ: Ըստ այսմ, հարկ է սա ուղղել՝ Փիլիպպոսի 5-րդ տարի:

4 Ինչպէս իր տեղում կը տեսնենք, Սարկաւագի ժամանակագրութեան մէջ տրուած է նաեւ Մանազկերտի ժողովի ժամանակը, թէպէտ այդ ժողովը յանուանէ չի նշուած:

5 Ներկայումս կիրառուող Փրկչական թուականը տարբեր է Հայ միջնադարեան մատենագրութեան մէջ կիրառուած՝ Քրիստոսի ծննդեան թուականից: Մասնաւորապէս, Յովհ. Սարկաւագը Քրիստոսի ծնունդը դրել է ըստ մեր ներկայ Փրկչ. թուականի՝ ն.Ք. 5 թուին: Այս մասին մանրամասն տե՛ս Գրիգոր Բրուտեան, Քրիստոսի ծննդեան թուականը ըստ Հայ մատենագրական աւանդոյթի, «Էջմիածին», Ե, 1998, էջ 73-88:

6 Այս ժամանակագրութիւնը տպուած է Յովհ. Սարկաւագի աշխատութիւնների շարքում (էջ 131-133) ըստ Մաշտոցեան Մատենադարանի (ՄՄ.) թիւ 1973 ձեռագրի (ընդօրինակուած 1342 թ. Երզնկայում): Հրատարակողը սա անվերապահօրէն համարել է Սարկաւագի գործը: Նոյնը, որպէս «Յովհաննէս քահանայի ժամանակագրութիւն» (ՄՄ. թիւ 1973, 8100, 2678 ձեռագրերի հիման վրայ), տպուած է «Մանր ժամանակագրութիւնների» Ա հատորում (Վ. Յակոբեան, Մանր ժամանակագրութիւններ, հ. Ա, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան 1951, էջ 17-31): Նոյն ժամանակագրութեան համառօտ տարբերակը Վիեննայի թիւ 29 ձեռագրից Հ. Ոսկեանը հրատարակել է «Սարկաւագ վարդապետին է բանս» վերտառութեամբ (Հանդէս Ամսօրեայ, 1925, սիւն 238): Հ. Հ. Ոսկեանը համարում է, որ այս բնագիրը «*նուազ տարբերութիւն ունի Անանիա Ծիրակացւոյն մէկ գործքէն. ուստի Սարկաւագ վարդապետ գործածած է Անանիայի այս կտորը»:* եռագրագէտ Արտ. Մաթեւոսեանն էլ այս մասին զրուցելիս կարծիք յայտնեց, որ սոյն ժամանակագրութեան բուն հեղինակը Մովսէս Խորենացին է: Այս բնագրի բուն հեղինակի հարցը դուրս է մեր քննութեան նիւթից: Միեւնոյն ժամանակ նկատենք, որ տարբեր ձեռագրերում սրա համառօտ եւ ընդարձակ տարբերակների առկայութիւնը Սարկաւագ վարդապետի անունով վկայում է, որ Սարկաւագը եթէ չի էլ հեղինակել, ապա գոնէ խմբագրել-լրացրել է սոյն բնագիրը: Այս հիման վրայ էլ սոյն բնագիրը կը քննենք իբր Յովհ. Սարկաւագի ստեղծագործութիւն:

7 Այստեղ եւ ստորեւ փակագծերում տրուած էջերը վերաբերում են Յովհաննէս Սարկաւագի մատենագրութեան 1956 թուականի հրատարակութեանը:

8 Հ. Ոսկեանի հրատարակած տարբերակում կայ. «*Ի փոխմանէն Ենովքայ մինչեւ ի ջրհեղեղն ամք շծ»:* Այստեղ էլ տրուած է *555* տարի. ճիշտ են թուի վերջին երկու նիշերը, բայց շփոթուած է առաջինը (գրուած է *շ*, փոխանակ *չ*-ի). չի բացառւում նաեւ, որ սա պարզ տպագրական վրիպակ է:

9 Ի դէպ, այս *2767 (Ս�շԿԷ)*-ը իբր Ադամից աշտարակաշինութիւնն եղած տարիների թիւ, տրուած է եւ Մ. Խորենացու նորայայտ ժամանակագրութեան մէջ. «*Եւ առնին ի ջրհեղեղէն մինչեւ ցՓաղեկ ազգք **Ե**, ամք **ՇԻԵ**: Եւ յԱդամայ՝ ազգք **ԺԵ**, ամք **ՍՇԿԷ**»* (տե՛ս Արտաշէս Մաթեւոսեան, Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութեան» չորրորդ գիրքը, Երեւան, 1995, էջ 125): Հ. Ոսկեանի հրատարակածում եւս առկայ է «*Ի ջրհեղեղէն մինչեւ ի յաշտարակն ամք **ՍՇԿԷ**»*, բայց մի քանի տող անց էլ ունենք. «*Ի յԱբրահամու մինչեւ ի հայ թուականն ամք **ՍՇԿԵ**»:* Այսինքն, համառօտ տարբերակում այս թիւը տրուած է երկու անգամ. առաջին անգամ՝ սխալ բացատրութեամբ, ինչպէս ընդարձակ տարբերակում, իսկ երկրորդ անգամ՝ թուի բացատրութիւնը տրուած է ճիշտ, միայն թէ այստեղ էլ թուի վերջին նիշը շփոթուած է. գրուած է *Ե*, փոխանակ *Է*-ի:

10 Ի դէպ նկատենք, որ ե՛ւ այս 3689 տարին, ե՛ւ էլ 3725-ը ներդաշնակ չեն Սուրբ Գրքի տուած թուերին: Այսպէս. ըստ 3689-ի Աբրահամի ծննդից մինչեւ ելքը Եգիպտոսից լինում է 505 տարի, իսկ ըստ 3725-ի՝ դրանից 36-ով աւելի՝ այսինքն, 541 տարի: Միեւնոյն ժամանակ, ըստ Սուրբ Գրքի, Աբրահամից մինչեւ Եգիպտոս մտնելը լինում է 290 տարի (Աբրահամը 100 տարեկանում ծնեց Իսահակին (Ծնն., ԻԱ, 5), Իսահակը 60-ում ծնեց Յակոբին (Ծնն., ԻԵ, 26), Իսրայէլն էլ (որ նոյն Յակոբն է) Եգիպտոս մտնելիս 130 տարեկան էր (Ծնն., ԽԷ, 9)): Տրուած է նաեւ, որ Եգիպտոսում Իսրայէլի ժողովուրդը մնացել է 430 տարի (Ելք, ԺԲ, 40): Այսպիսով, ստացւում է, որ Աբրահամից մինչեւ Եգիպտոսից ելքը 290+430=720 տարի է: Սա էապէս տարբեր է վերի երկու թուերից էլ: Ըստ երեւոյթին, ժամանակագրութեան մէջ այդ թուերն ստացուել են Ս. Գրքից զատ նաեւ այլ տուեալների հիման վրայ: Այստեղ տրուած 505 տարին լրիւ ներդաշնակ է Խորենացու չորրորդ գրքի ժամանակագրական կանոնի տուեալներին: Ըստ այս կանոնի, Աբրահամը 75 տարեկանում գալիս է Քանանու երկիրը, 25 տարի անց ծնում է Իսահակին (այսինքն՝ 25+75=100

տարեկանում): Ապա. «*Իսահակ եղեալ ամաց **Կ** (60), ծնաւ զՅակովբ: Յակոբ եղեալ ամաց **ՁԷ** (87), ծնաւ զՂեւի: Ղեւի եղեալ ամաց **ԽՋ** (46), ծնաւ զԿահաթ: Կահաթ եղեալ ամաց **Կ** (60), ծնաւ զԱմրամ: Ամրամ եղեալ ամաց **Հ** (70), ծնաւ զԱհարովն: Եւ յամին ութսներորդի երրորդի (83) կենաց Ահարովնի ելին որդիքն Իսրաէղի յերկրէն Եգիպտացւոց»* (Արտ. Մաթեւոսեան, նշ. աշխ., էջ 131): Այս տարիների գումարը լինում է 505 (100+60+87+46 +60+70+82=505):

11 Այս ժամանակագրութեան համակարգը ըստ էութեան եօթանասնից ժամանակագրական համակարգն է, որ շատ լայնօրէն կիրառել է Սարկաւագ վարդապետը:

12 Եթէ ընդունենք, որ Սարկաւագի «Ժամանակագրութիւնը» խմբագրուած-լրացուած տարբերակն է Անանիայի (դրանից առաջ էլ՝ Մ. Խորենացու) ժամանակագրութեան, ապա կը նշանակի, որ նրանք եւս հիմք են ընդունել Եւսեբիոս Կեսարացու ժամանակագրական համակարգը:

13 Օրինակ. Ադամից Օլիմպիադ ըստ Ծ.եակի 4640 տարի է, իսկ ըստ Եւսեբիոսի՝ 4424. սրանց տարբերութիւնը 216 տարի է: Իսկ Մովսէսից Օլիմպիադ ըստ Ծ.եակի 915 է, ըստ Եւսեբիոսի՝ 735: Սրանց տարբերութիւնն էլ 180 է:

14 Այստեղ խօսքը Դանիէլի մարգարէութեան մէջ տրուած թուերին է վերաբերում: Ըստ Դանիէլի տեսիլքի, մինչեւ օծութեան աւարտն ու ապականութեան սկիզբը պիտի լինի եօթ եօթնեակ եւ 62 եօթնեակ, որ միասին տալիս են 7+62=69 եօթնեակ (Դան., Թ. 24, 25): Սա էլ կը տայ 69¥7=483: Ահա այս 483 թիւն է, որ իբր տարիների գումար տրուած է Սարկաւագի մօտ, որպէս Դանիէլի տեսիլքից Հերովդէսն եղած տարիների թիւ (տե՛ս նաեւ յաջորդ մէջբերումը):

15 Տե՛ս նախորդ ծանօթագրութիւնը:

16 Սա Օլիմպիադի տարիները նշանակելու ընդունուած ձեւն է. նախ տրւում է Օլիմպիադի քառամեակի թիւը, ապա՝ տուեալ պարբերութեան (քառամեակի) մէջ տուեալ տարուայ ունեցած հերթական թիւը՝ 1-ից 4:

17 Ընդհանրապէս, ժամանակագրութեան այս հատուածում տարիների շփոթութիւնը նկատուել է վաղուց: Օրինակ, Ներսէս Պալիենցի (ԺԴ դար) ժամանակագրութեան մէջ Հերովդէսի եւ Քրիստոսի ժամանակները տալուց յետոյ հեղինակը աւելացնում է. «Աստ ոչ համաձայնին թուականութիւնքս պէսպէս» (Վ. Յակոբեան, Մանր ժամանակագրութիւններ, հ. Բ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1956, էջ 203):

18 Չի բացառւում, որ նախապէս ըստ տարբեր համակարգերի Քրիստոսի ծնունդը Հերովդէսի 32, կամ 38-րդ տարիներին դրուած լինելն էլ առիթ է տուել այդ թուերն իրար հետ շփոթելու (առաւել եւս, որ Բ (2) եւ Ը (8) գրերն իրար բաւական նման են) եւ 38-ի փոխարէն հետագայում ամենուր 32 գրելու:

19 Տե՛ս այս մասին աւելի մանրամասն՝ Գրիգոր Բրուտեան, Քրիստոսի ծննդեան թուականը ըստ Հայ մատենագրական աւանդոյթի, «Էջմիածին», Ե, 1998, էջ 73-88:

20 Աստ աւելացնենք, որ Ադամից մինչեւ Քրիստոսի ծնունդի համար այստեղ ճշգրտուած թուերը նոյնութեամբ համընկնում են Յակոբ Ղրիմեցու Տոմարի մեկնութեան մէջ տրուածներին (Յակոբ Ղրիմեցի, Տոմարագիտական աշխատութիւններ, աշխատասիր. Ջ. Էլնաթեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1987, էջ 214): Բացառութիւն են կազմում միայն Օլիմպիադի սկիզբը եւ Հերովդէսի թագաւորութեան սկիզբը, որոնց ժամանակները Ղրիմեցու հրատարակուած երկերում տրուած չեն: Նոյնպիսի համընկնում կայ նաեւ Սամուէլ Անեցու պատմութեան մէջ տրուած թուերի հետ. տե՛ս Սամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, աշխատասիր. Արշակ Տէր-Միքէլեանի, տպարան Ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1893, էջ 1-51:

21 Եթէ վերցնենք 195-րդ օլիմպիադի ոչ թէ առաջին, այլ 2-րդ, 3-րդ, կամ 4-րդ տարին, ապա այս տարբերութիւնը 2-ի փոխարէն կը լինի 3, 4, կամ 5 տարի:

22 Եթէ վերցնենք 195-րդ օլիմպիադի 'ոչ թէ առաջին, այլ 4-րդ տարին, ապա այս տարբերութիւնը կը լինի 1 տարի, եւ էլի կ'ունենանք տարբեր տարիներ:

23 Տե՛ս Գր. Բրուտեան, «Էջմիածին», Ե, 1998, էջ 83-85:

24 Հ. Ոսկեանի հրատարակած տարբերակում էլ տրուած են նոյն թուերը. տե՛ս Հ. Ոսկեան, նշ. աշխ.: Նոյն թուերը առկայ են նաեւ Սարկաւագի տոմարական պատճէնում (էջ 217). միայն թէ այստեղ բաց է թողնուած մի փոքրիկ պարբերութիւն: Այսպէս. ունենք. «Ի մկրտութենէն մինչեւ ի քսան ամեակն Կոստանդիանոսի [ամք Ց (300): Անտի] մինչեւ ցերկուհարիւրեկին գիւտ յԱնդրէասէ՝ ամք ԻԳ (23): Եւ անտի մինչեւ ի հայ թուականն ամք Մ (200)»: Այստեղ բաց է թողնուած ուղղանկիւն փակագծերում տրուած հատուածը, որով աղարտուել է մէջբերուած պարբերութեան բուն իմաստը: Այդ հատուածը, սակայն, առկայ է Յովհաննէսի ժամանակագրութեան մէջ:

25 Այս նոյն թուերն են տրուած նաեւ այս ժամանակագրութեան՝ Հ. Ոսկեանի եւ Վ. Յակոբեանի հրատարակած տարբերակներում:

26 Տե՛ս այս մասին ծանօթ. 3:

27 Այս մասը Հ. Ոսկեանի հրատարակածում փոքրինչ տարբեր է. «...մինչեւ ի դիր Մ.եկին ամք ԻԳ. ի ՁԱ թուական Հոռոմց» (տե՛ս Հ. Ոսկեան, նշ. աշխ., նաեւ՝ Վիեննա, ձեռ. թ. 29, էջ 253բ, ՄՄ., մանրաժապաւէն թիւ 669): Իսկ Վ. Յակոբեանի հրատարակածը միայն կէտադրութեամբ է տարբերւում աստ տրուածից եւ այն էլ՝ ոչ էապէս:

28 19 տարին Լուսնի թուլերի կրկնման պարբերու-

© National Library of Armenia

թիւնն է:

29 Այս 304-ը ներդաշնակ է նաեւ «Ցաղագս Ծ.եկի» երկից վերը բերուած հատուածում տրուած 313 տարուն՝ Փիլիպպոսից մինչ հինգհարիւրեակի (Ծ.եակի) գիւտի համար: Ծ.եակի գիւտը եղել է Հայոց թուականի սկզբից 9 տարի անց, որով եւ՝ Փիլիպպոսից Հայոց թուական՝ 304+Հայոց թուականից Ծ.եակը՝ 9=Փիլիպպոսից Ծ.եակ՝ 313 տարի:

30 Նոյնն է եւ Ց. Ղրիմեցու՝ «Ի խնդիրս հասարակաց օգտի» երկում: Այստեղ այն հարցին, թէ երբ է դրուել թուականը, պատասխանուած է. «*յԱդամայ հետէ ՐՁՀԶ (5976) ամ էր*» (տե՛ս Յակոբ Ղրիմեցի, էջ 131):

31 Այս մասին աւելի մանրամասն՝ նայի՛ր իմ յօդուածում. Գր. Բրուտեան, Քրիստոսի ծննդեան թուականը ըստ Հայ մատենագրական աւանդոյթի, «Էջմիածին», Ե, 1998, էջ 73-88:

32 Տպագրում գրուած է՝ *ՄԾԲ* (552), որ ակնյայտ վրիպակ է եւ հարկ է շտկել՝ *ՄԾՌ* (252):

33 4424+1075=5499, եւ 4424+1078=5502:

34 4640+1075=5715, եւ 4640+1078=5718:

35 Այս մասին հանգամանալի քննարկում կը լինի ստորեւ:

36 Իրօք, ըստ ժամանակագրութեան Հայոց թուականի սկիզբը միշտ տրուած է Ադամից 5752 տարի յետոյ, իսկ Քրիստոսի ծնունդը՝ 5198 տարի յետոյ, որով եւ կը լինի Քրիստոսից Հայոց թուական՝ 5752-5198=554 տարի: Այս մասին՝ ներքեւում, ըստ կարգի:

37 Ըստ սրա, Թադէոսը եկել է Քրիստոսի համբարձումից 36–33=3 տարի անց: Եւ հարկ է բացատրել, թէ ինչով է պայմանաւորուած եղել այս 3 տարուայ յապաղումը:

38 Նոյնն է եւ Վ. Յակոբեանի հրատարակածում, իսկ Հ. Ոսկեանի տարբերակում կայ միայն. «*ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ ի դիրս շ.եկին ամք շկբ*»:

39 Նոյնն է եւ Վ. Յակոբեանի ու Հ. Ոսկեանի հրատարակածներում:

40 Բնագրում այստեղ ՎՇԿԸ (3568) է տրուած, որ ակնյայտ վրիպակ է: Այս նոյն սխալը առկայ է նաեւ Վ. Յակոբեանի հրատարակածում: Իսկ Հ. Ոսկեանի օրինակում դրա փոխարէն ՍՁԿԵ (2765) է: Այս մասին տե՛ս նաեւ վերեւում, ծանօթ. 8:

41 Այս նոյնը տառացիօրէն կրկնուած է Յովհաննէսի տոմարական Պատճէնում (էջ 217): Միակ տարբերութիւնն այն է, որ տոմարական պատճէնում շարադրանքից բաց է թողնուած «*ամք Յ(300): Անտի*» հատուածը:

42 Տե՛ս վերեւում:

43 Տե՛ս նոյն տեղում:

44 Լուսնի աւագ լրումը Լուսնի զատկական լրումն է, այսինքն՝ առաջին լրումը գարնանամուտից յետոյ: Աւագ լրման օրը մեծ կարեւորութիւն է ունեցել միջնադարեան տոմարագիտութեան մէջ. դրանով որոշուել է Զատկուայ օրը:

45 Տե՛ս Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, աշխատասիր. Ա.Հ. Աբրահամեան, ՀՍՍՌ Մատենադարանի հրատ., Երեւան, 1944, (Անանիա Շիրակացի) էջ 264:

46 Հայկական տոմարում վերադիրների նոր համակարգը կիրառուած է սկսեալ Յովհ. Սարկաւագի աշխատութիւններից: Սրա էութիւնն այն է, որ Սարկաւագ վարդապետը, կամենալով Լուսնի վերադիրների համակարգը ներդաշնակեցնել Լուսնի իրական դիտուող փուլերին, աւելացնում է վերադիրների արժէքը 2-ով: Այս շտկումը անհրաժեշտ էր դարձել ի հետեւանք այն բանի, որ այդ ժամանակներում Լուսնի փուլերը որոշւում էին Մեթոնի 19-ամեայ պարբերաշրջաններով, որոնք էլ որոշակի սխալ էին գոյացնում տեւական ժամանակի ընթացքում: Ահա, Սարկաւագի ժամանակ այդ սխալը կուտակուելով հասել էր երկու օրուայ, որ եւ ուղղում է Սարկաւագ վարդապետը:

47 Իրօք, Անանիա Շիրակունու կազմած Խառնախորանի օժանդակ աղիւսակներում ԻԳ(23) վերադիրի դիմաց Լուսնի աւագ լրումը Մարտի 21 (ԻԱ)-ին է: Տե՛ս Գրիգոր Բրուտեան, Անանիա Շիրակացու «Խառնախորանը», Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1998, էջ 83:

48 Տե՛ս Գր. Բրուտեան, նշ. աշխ.:

49 Տե՛ս նոյն տեղում:

50 Տե՛ս Անանիա Շիրակացի, էջ 263:

51 Անդրէաս Բիւզանդացու 200-եակը 200 տարիների համար կազմուած զատկացուցակ է եղել, ուր տրուած են եղել ութ քրիստոնեայ ազգերի օրացոյցներով Զատիկները (գուցէեւ որոշ այլ օրացուցային տեղեկութիւններ) Փ. 353-ից Փ. 552 թուականների համար: Այս ցուցակում վերջինը եղել է Փ. 552 թ. Զատիկը (Մարտի 31-ին):

52 Այս մասին աւելի մանրամասն՝ տե՛ս Գրիգոր Բրուտեան, Օրացոյց Հայոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997, էջ 56 -76:

53 Տե՛ս, օր., Գր. Բրուտեան, նշ. աշխ.:

54 Այս հատուածը համարեայ նոյնն է նաեւ Վ. Յակոբեանի եւ Հ. Ոսկեանի հրատարակածներում:

55 Սարկաւագի բնագրում տրուած է Փիլիպպոսի 2-րդ տարի, որը շտկում ենք, դարձնելով 5-րդ: Այս ուղղման մասին մանրամասն տե՛ս վերեւում՝ ծանօթ. 3:

56 Հ. Ոսկեանի հրատարակած տարբերակում այստեղ տրուած է ՅԻԲ (322) տարի:

57 Հ. Ոսկեանի հրատարակած տարբերակում սոյն տեղում ՀԴ (74) է:

58 Հ. Ոսկեանի տարբերակում այս Ծ (50) տարին բաց է թողնուած, եւ դրա փոխարէն գրուած է. «*Անտի (Կ.Պոլսոյ ժողովէն - Գ. Բ.) մինչեւ յԵփեսոսի ժողովն ամք ԻԷ (27): Անտի ի Դվնայ ժողովն ի Հայք ամք ԼԶ (36)*»: Բաց է թողնուած եւ Քաղկեդոնի ժողովը:

59 Հ. Ոսկեանի տարբերակում սոյն տեղում ՆԼԳ (433) տարի է:

60 Բացի նշուած տարբերութիւններից, մնացեալ թուերը Հ. Ոսկեանի հրատարակածում չեն տարբերւում աստ տրուածներից: Սրանց հետ նոյնն են եւ Վ. Յակոբեանի հրատարակածի թուերը:

61 Այս երեք ժամանակային տուեալներն էլ կը վերաբերեն միեւնոյն իրադարձութեանը, եթէ բնագիրը սոյն տեղում խեղուած չէ, եւ այստեղ բացթողումներ ու յաւելումներ չկան: Ինչպէս ստորեւ կը տեսնենք, դա իրօք այդպէս է:

62 Սամուէլ քահանան տալիս է. «ՆԿԲ: *Դարձեալ վասն Փլաբիանոսի Բ. ժողովն յԵփեսոս, յետ ԻԴ. ամի առաջին ժողովոյն, ի վախճանելն Կիւրղի Աղեքսանդրացւոյ*»: Տե՛ս Սամուէլ Անեցի, էջ 70:

63 Այս կերպ ստացւում է, որ այս երկու եռանիշ թուերի վեց թուանշանների մէջ հնարաւոր բոլոր սխալները մենք համարում ենք թուերից միայն մէկի՛ մէջ (433→424): Թէպէտ առաջին հայեացքից կարող է թուալ, թէ քիչ հաւանական է, որ ենթադրեալ երկու սխալներն էլ լինեն միեւնոյն թուի մէջ, այդուհանդերձ, սա նոյնիսկ աւելի՛ հաւանական է, քան այն, որ սխալները լինեն երկու տարբեր թուերի մէջ: Բանն այն է, որ սխալի յառաջացման ամենահաւանական պատճառներից է բնագրի տուեալ մասի եղծումը (ասենք՝ գրերի ջնջուելը, թղթի, կամ մագաղաթի վնասուելը, ապականուելը եւն): Ըստ այսմ, բնականաբար, աւելի հաւանական է, որ եղծուէր մի՛ հատուած, եւ ոչ թէ՝ երկուսը: Այս առումով, թուի մի թուանշանի սխալ լինելը կը նշանակի, որ մեծ է այդ թուի նաեւ միւս (կից) թուանշանների սխալ լինելու հաւանականութիւնը:

64 Խօսքը Ս. Գրքի առաջին՝ փութանակի թարգմանութեան մասին է: Հ. Աճառեանը նոյնիսկ տալիս է դրա որոշակի թուականը՝ Փրկչ. 406թ.: Իսկ Ս. Գրքի երկրորդ՝ վերջնական թարգմանութիւնը, որ եղել է Եփեսոսի ժողովից անմիջապէս յետոյ, Աճառեանը դնում է Փ. 432-ին (Հ. Աճառեան, Հայոց գրերը, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1984, էջ 389 - 392):

65 Իսկ եթէ յիշենք, որ Սարկաւագը Քրիստոսի ծնունդը դրել է ն. Ք. 5 թուին, ապա այս 426-ը կը տայ 426–5+1=Փրկչ. 422 թիւը, որ էլի 405-430 թթ. միջակայքում է:

66 Ինչպէս վերը տեսանք, այս 424-ը մեզ է հասել բաւական աղաւաղուած վիճակով. Ա. Աբրահամեանի եւ Վ. Յակոբեանի հրատարակածներում 533 է, Հ. Ոսկեանի օրինակում՝ 433, որն էլ ունենք հիմք է ընդունուել այդ թուի նախնականը վերականգնելու համար. ՆԻԴ→ՆԼԳ:

67 Սամուէլ Անեցի, էջ 87:

68 ՄՄ, ձեռ. թիւ 2679, էջ 163բ: Նոյնը տե՛ս նաեւ՝ Մատեան Գիտութեան եւ Հաւատոյ Դաւթի քահանայի, հայերէն թղթեայ հնագոյն ձեռագիր 981 թ., նմանահանութիւն, աշխատասիր. Արտ. Մաթեւոսեան, «Նաիրի», Երեւան, 1995: Նաեւ՝ նոյնի նմանատպութիւնը, Երեւան, 1997, էջ 236:

69 Տե՛ս Մ.Մ. ձեռ. թիւ 2679, էջ 162բ, նաեւ՝ ձեռագրի նմանահանութիւնը: Նոյնը նմանատպութեան մէջ՝ էջ 234: Ընդհանրապէս, այս Յովհան Տեկորեցու ժամանակն ու ինքնութիւնը հայկական աղբիւրներում բաւական շփոթ են ներկայացուած: Սարկաւագի ժամանակագրութեան մէջ նա յիշուած է Քաղաքի (Վաղարշապատի) Ս. Կաթողիկէի ժողովի կապակցութեամբ, Մ.Մ. թիւ 2679 ձեռագրում նա յիշուած է ինչ-որ չորրորդ ժողովի կապակցութեամբ: Այդ ժողովը նրան կաթողիկոս է նստեցրել Կարինում: Ըստ այս տեղեկութեան էլ, կարծես թէ այս Յովհան Տեկորեցին նոյնացուած է Յովհան Սիւնակա՝ որ եւ՝ Յովհան Բագարանցու հետ, թէպէտ այդ նոյն ձեռագրի ժամանակական կանոնում Յովհան Բագարանցին առանձին նշուած է իբր կաթողիկոս (ձեռագրի միեւնոյն էջի վրայ): Աճառեանն էլ Յովհան Տեկորեցուն համարում է կաթողիկոսութեան տեղապահ եւ դնում է Փ. 724 թ. իբր Մանազկերտի ժողովի կազմակերպիչ (Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան, 1946, էջ 553):

70 Սամուէլ Անեցի, էջ 87:

71 Անդ, էջ 289:

72 Հայոց ՃԾԸ (158)-ին դնում է Եղիա Արճիշեցու 13-ամեայ գահակալութիւնը, որից յետոյ էլ դնում է Յովհան Օձնեցուն: 158-ից 13 տարի անց լինում է 171 թիւը: Տե՛ս Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, աշխատասիր. Ստ. Մալխասեանց, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 102:

73 Այս ձեռագրի ժամանակագրութեան մէջ տեղ գտած տուեալները պարտաւոր ենք համարել արժանահաւատ, նկատի ունենալով, որ սոյն ժամանակագրութիւնը կազմուել է 981-1032 թթ. միջակայքում եւ իր հնութեամբ աւելի առաջնային է մեզ հասած շատ այլ սկզբնաղբիւրների նկատմամբ: Տե՛ս Արտաշէս Մաթեւոսեան, Մատեան Գիտութեան եւ հաւատոյ, Երեւան, 1997, էջ 21:

74 Այս 329-ը դրուած է այստեղ պայմանականօրէն: Նիկիոյ ժողովը եղել է Փ. 325-ին Եթէ նկատի ունենանք, որ Սարկաւագն էլ Քրիստոսի ծնունդը դրել է ն. Ք. 5 թուին, ապա ըստ այդմ պիտի Սարկաւագի ժամանակային համակարգով Քրիստոսի ծնունդից Նիկիոյ ժողովը լինի 325+5–1=329 տարի: Թուերի գումարից 1 ենք հանում, որպէսզի հաշուի առնենք ն.Ք. թուականից Փրկչ. թուականին անցնելը (զի այս համակարգում բացակայում է զրօ թուականը): Այսպիսով, այս 329 թուականը Քրիստոսից Նիկիոյ ժողովն ընկած

© National Library of Armenia

ժամանակն է, եթէ հիմք ընդունենք Քրիստոսի ծննդեան սարկաւագեան թուականը եւ Նիկիոյ ժողովի իրական թուականը: Տեղին է նկատել, որ վերոյիշեալ հնագոյն թղթեայ ձեռագրի ժամանակական կանոնում էլ Նիկիոյ ժողովը դրուած է Քրիստոսի ծննդեան ՅԼ (330) թուին (ՄՄ. ձեռ. 2679, էջ 161ա, Մատեան գիտ. եւ հաւատոյ, նմանատպութիւն, էջ 231): Իսկ դա նշանակում է, որ ըստ դրա՝ Քրիստոսի ծննդից մինչ Նիկիոյ ժողովը 330–1=329 տարի է (քանի որ Քրիստոսի ծնունդը 1 թուին է): Այսինքն, այս «պայմանականօրէն» դրուած թիւը այնքան էլ «պայմանական» չէ:

75 Սա ճիշդ է այն դէպքում միայն, եթէ Սարկաւագի ժամանակագրական համակարգում նախապէս եղած թուերը (գոնէ այս մէկը) համապատասխանել են դրանց իրական արժէքներին:

76 Այստեղ կայ քերականական որոշ դժուարութիւն այն առումով, որ եթէ համարենք նախապէս եղած. «*Անտի ի Քաղկեդոնի ժողովն՝ ամք Ի(20) է*», ապա օժանդակ բայը եզակի է, մինչդեռ ենթական՝ «*ամք*» յոգնակի է: Հնարաւոր է նաեւ, որ այս «է»ն լինի յաջորդ նախադասութեան սկզբում. «*Է անտի ի Դվնայ ժողովնգ*»: Ընդ որում, չի բացառւում, որ այս «է»ն յառաջացած լինի նախկին «*եւ*»ից. «*Եւ անտի ի Դվնայ ժողովնգ*»: Կարելի է այս «է»ի համար ենթադրել նաեւ այլ բացատրութիւն. ասենք՝ հետագայում արուած յաւելում, կամ այլ ինչ:

77 Ըստ այսմ, Սարկաւագի ժամանակագրութեան սոյն հատուածի նախնական բնագիրը կը լինի. «*Անտի ի Քաղկեդոնի ժողովն՝ ամք Ի (20) է: Անտի ի Դվնայ ժողովն ի Հայք՝ գ*»: Կամ էլ կը լինի. «*Անտի ի Քաղկեդոնի ժողովն՝ ամք Ի (20): Ե[ւ] անտի ի Դվնայ ժողովն ի Հայք՝ գ*»:

78 Տե՛ս ծանօթ. 37:

79 Տե՛ս Գրիգոր Բրուտեան, Քրիստոսի ծննդեան թուականը ըստ Հայ մատենագրական աւանդոյթի, «Էջմիածին», Ե, 1998, էջ 73-88:

80 Տպագրում տրուած է 552, որ ակնյայտ վրիպակ է եւ հարկ է շտկել՝ 252:

81 Տե՛ս Գրիգոր Բրուտեան, Օրացոյց Հայոց, էջ 86-96:

82 Ծ.եակ, կամ հինգհարիւրեակ եւ 532 տարիների օրացուցային պարբերաշրջան, որ ընդունուել է Էաս Աղէքսանդրացու գլխաւորած՝ 36 տոմարագէտների Աղէքսանդրիայի ժողովում՝ Փ. 560 թուին:

83 Այս շփոթութիւնը յարուցուած է եղել կաթողիկոսների գաւազանագիրքի այս հատուածում Յովհան Բագարանցու գոյութեամբ, որ յետոյ համարուել է հակաթոռ: Տարբեր հեղինակներ նրան դրել են տարբեր տեղեր, եւ Հայոց պատմութեան ժամանակագրութեան այս հատուածում յառաջացել է շփոթութիւն: Մանրամասն տե՛ս Գր. Բրուտեան, նշ. աշխ., էջ 61-96: Չի բացառւում նաեւ, որ Ծ.եակի եւ Հայոց թուականի շփոթուելը պայմանաւորուած լինի նրանով, որ Ծ.եակի ընդունման հետ զուգահեռ՝ Աղէքսանդրիայի ժողովում (կամ դրա առնչութեամբ) օտարների կողմից սահմանուել է նաեւ հայկական անշարժ օրացոյց, որ սակայն Հայաստանում ընդունելութիւն չի գտել:

84 Սրա օգտին վկայութիւն կարելի է դիտել այն, որ Սարկաւագի աշակերտ Սամուէլ Անեցու մօտ էլ Հայոց թուականը դրուած է Մովսէսի հէնց 3-րդ (*գ*) տարում: Սամուէլ Անեցի, էջ 74-75:

85 Տե՛ս վերեւում:

86 Վ. Յակոբեանի հրատարակածում այս հատուածը նոյնն է, ինչ եւ սա, իսկ Հ. Ոսկեանի օրինակում այս հատուածը ուղղակի բացակայում է:

87 Սեբէոսը դրել է Խոսրով Ապրուէզի 25-րդ տարում: Տե՛ս, օր., Գ. Աբգարեանի ծանօթագրութիւնները. Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիր. Գ. Վ. Աբգարեանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1979, էջ 115 եւ 285-286: Ի դէպ, ՄՄ. թիւ 2679 ձեռագրում էլ Հայոց **ԾԹ** (59)-ին դրուած է. «*խոսրով պարսիկ առաւ արզ Դորրդ Հայք. զերուսաղէմ, եւ զեգեպտոս եւ զսուրբ խաչն տարաւ*» (էջ 162բ, նմանատպութիւն՝ էջ 234):

88 Սա կը նշանակի, որ վերջին երկու դէպքում Սամուէլի տուած Քրիստոսի թուականներից ստացուող Հայոց թուերն էլ կը լինեն համապատասխանաբար՝ 74 եւ 77, այսինքն՝ մէկական տարով աւելի, քան Յովհաննէսի տուած թուերը: Այս մի տարուայ զանազանութիւնը սկզբունքային չէ եւ չի կարող խանգարել եզրակացնելու, որ Սամուէլը (գոնէ՝ հիմնականում) հետեւել է Սարկաւագի տուած թուերին: Ինչպէս երեւում է Սամուէլի պատմութիւնից, այստեղ կան ոչ սակաւ դէպքեր, երբ Հայոց եւ Քրիստոսի ծննդեան թուերի տարբերութիւնը 554 է. այսինքն, վերը նշուածները եզակի դէպքեր չեն: Հնարաւոր է, սա արդիւնք է Սամուէլի երկի հետագայ ինչ-որ անյաջող միջամտութեան:

89 Եթէ Սարկաւագի մօտ **ՀԳ** (73)-ի փոխարէն եղած լինի **ՀԴ** (74), այսինքն, այս դէպքում եւս Քրիստոսի ծննդեան եւ Հայոց թուականների տարբերութիւնը եղած լինի 553 տարի, ապա, ըստ այսմ, Սարկաւագի մօտ Երուսաղէմի առումն էլ պիտի եղած լինի Հայոց **Հ** (70) թուին:

90 Հնարաւոր է, գուցէ, որ **Կ**-ը դառնար **Լ**. որոշ գրատեսակների դէպքում դա հնարաւոր է, եթէ ջնջուէր **Կ**-ի աջ ուղղաձիգ գիծը: Իսկ **Թ**-ից **Է** ստանալը աւելի դժուար է:

91 69-ից 1 ենք հանում, քանի որ Հայոց 69 թիւը Հայոց թուականի սկզբից 69–1 տարի յետոյ է (Քրիստոսի ծնունդից մինչեւ Հայոց 1 թիւը 554 տարի է ըստ Սարկաւագի):

92 Նոյն 73 տարին է տրուած նաեւ Վ. Յակոբեանի

ու Հ Ոսկեանի հրատարակածներում:

93 Նոյնն է եւ Վ. Յակոբեանի հրատարակածում, իսկ Հ. Ոսկեանի օրինակում այս եւ սրան յաջորդող տեղեկութիւնները բացակայում են:

94 Այստեղ Սամուէլի շարադրանքը մի փոքր շփոթ է: Հայոց ՁԵ թուին դրուած է Երուսաղէմի առումը Մահմետի կողմից, իսկ դրանից յետոյ էլ Կարնոյ ժողովն է՝ առանց թուականի, եւ դրանից էլ անմիջապէս յետոյ՝ «ՈՒ *(640): Տէր Եզր՝ ամս Թ*» (էջ 79-80):

95 Այդ դէպքում պիտի սխալ կամ յետսամուտ յաւելում համարել այդ ժողովին վերաբերող հատուածի վերջում Եզրի մասին գրուածը. «ՈՒ*: Տէր Եզր՝ ամս Թ*»:

96 Եթէ ընդունենք 87-ի փոխարէն 85 (Ե→Է), ապա կը լինի համապատասխանաբար՝ Քրիստոսից 638 տարի եւ Ադամից 5836 տարի:

97 Նոյնն է եւ Վ. Յակոբեանի հրատարակածում:

98 Սրան ի տարբերութիւն, Սամուէլ Անեցու մօտ դրուած է. «ՈՒԲ*: (642) Ելն տաճկաց ի Հայս*» (էջ 80):

99 Նոյնն է եւ Վ. Յակոբեանի հրատարակածում: Միայն թէ՝ Վ. Յակոբեանը իր տուած ծանօթագրութեան մէջ (Մանր ժամանակագրութիւններ, հ. Ա, էջ 28) այս Սուրբ Գրիգորը, որ անկասկած Զուարթնոցն է, շփոթել է Խոր Վիրապում՝ Ս. Գրիգորի վիրապի վրայ նոյն կաթողիկոսի կառուցած եկեղեցու հետ: Որ Սարկաւագի այս տեղեկութիւնը իրօք Զուարթնոցին է վերաբերում, հաստատում է Սամուէլ քահանայի գրածը այդ նոյնի մասին. «***ՈԹԴ****: (654) Հայրապետն Ներսէս շինէ զսուրբ Գրիգոր, զզարմացուցիչն տեսողաց, բայց յառաջ շինէ զկնայարան սրբոյն Սարգսի ի Դրնին, եւ զոր ի վերայ վիրապի սրբոյն Գրիգորի*» (Սամուէլ Անեցի, էջ 83): Այստեղ յստակօրէն իրարից զանազանուած են Ս. Գրիգորի վիրապի վրայ շինուածը եւ Ս. Գրիգոր տաճարը, որ է Զուարթնոցը՝ «*զզարմացուցիչն տեսողաց*»:

100 Նոյնն է եւ Վ. Յակոբեանի հրատարակածում:

101 Ի դէպ, եթէ նկատի ունենանք, որ Սարկաւագը Քրիստոսի ծնունդը դրել է ն. Ք. 5 թուին, ապա այս 671-ը կը տայ Փրկչ. 667 թիւը: Եւ այս 667-ն էլ շատ լաւ ներդաշնակում է Անանիայի մի յիշատակարանում տուածին, ըստ որի, Անանիան Հայաստան է վերադարձել Փ. 666 թուի երկրորդ կէսին, ուստի եւ բնական է, որ կաթողիկոսը նրան կանչէր եւ յանձնարարութիւն տար դրա յաջորդ տարում՝ Փ. 667-ին: Տե՛ս Գր. Բրուտեան, Քրիստոսի ծննդեան թուականը ըստ հայ մատենագրական աւանդոյթի, «Էջմիածին», **Ե**, 1998, էջ 80-81:

102 Ինչպէս վերը տեսանք, այդ մասում բնագիրն աղաւաղուած է, եւ Մանազկերտի ժողովին վերաբերող մի հատուած բնագրից դուրս է մնացած:

103 Նոյնն է եւ Վ. Յակոբեանի հրատարակածում:

104 Ի դէպ, աւագ լրման այսպիսի ամսաթուերը լրիւ ներդաշնակ են Անանիա Շիրակունու կազմած խառնախորանի օժանդակ աղիւսակներում ամրագրուած 19-երեակների ու վերադիրների համակարգերին: Սա եւս խօսում է այն մասին, որ Սարկաւագի նշած երկրորդ Ծ.եակը հէնց աղէքսանդրեան երկրորդ Ծ.եակն է, քանի որ Անանիան իր տոմարական երկերում լրիւ հետեւել է Անդրէաս Բիւզանդացու տոմարական համակարգին, որն էլ իր հերթին, յետոյ ընդունուել է իբր աղէքսանդրեան Ծ.եակի համակարգ: Տե՛ս Գր. Բրուտեան, Անանիա Շիրակացու «Խառնախորանը», Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1998, էջ 50-58 եւ 83:

105 Անեցու մօտ էլ Ծ.եակի սկիզբը դրուած է Քրիստոսի ՌՂԶ (1096) թուին (էջ 120):

106 Նոյնն է եւ Վ. Յակոբեանի հրատարակածում:

107 Տե՛ս ՄՄ. ձեռ. թիւ 2679, էջ 2բ, նմանատպութիւն՝ էջ 52: Այստեղ մի սխալ կայ. հոռմ. եօթներեակը ձեռագրում տրուած է **Բ**, որ սխալ է եւ հարկ է շտկել ու դարձնել **Գ** *(3)*: Այս մասին տե՛ս Գր. Բրուտեան, Անանիա Շիրակունու ՇԼԲ բոլորակը ըստ հայերէն հնագոյն թղթեայ ձեռագրի, «Էջմիածին», Ա, 1998, էջ 125-143:

© National Library of Armenia